

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պատվիրակությունը Վիեննայում



Օլգա Դուբերի այցը ԵՊԿ.
Նորայր Մաղաքյան, Էլվիրա Մարգարյան, Անդրեյ Կուրբետ, Շահան Աղաբալյան, Սոնա Դովիաննիսյան, Արմեն Պուլինյան, Օլգա Դուբեր, Նարե Սուբիասյան, Ալբերտ Նավասարդյան, Վիլի Մարտիկյան



«Երաժշտության եւ ստեղծագործական կրթության ոլորտում ԱՊՀ երկրների սամիթ»



«Երաժշտության և ստեղծագործական կրթության ոլորտում ԱՊՀ երկրների սամիթ»-ի մասնակիցները



Մայիսի 18-ը Թանգարանների միջազգային օրը Լուսինն Չափարյանի եւ Խորեն Պալյանի տուն-թանգարանում



Անի Յուխանյան, Սուսաննա Դավթյան (տուն-թանգարանի տնօրեն),
Գոհար Շաղոյան (ԵՊԿ հրատարակչության հիմնադիր-հրատարակիչ),
Սուսաննա Մուշեղյան (Տ. Չուխաբյանի անվ. ՄԵԴ ուսուցչուհի)



Екатеринбург: фестиваль, посвященный Араму Хачатуряну



Участники фестиваля "Арам Хачатурян. Циром Исаян" 3



Մեկնարկել է Պենդերեցկու անվան ժամանակակից դասականների 3-րդ փառատոնը



Յոսաննա Վնուկ-Նազարովա, Դայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, ղեկավար՝ Սերգեյ Սմրատյան



ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԱԶԳԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆ Երաժշտությունը՝ խաղաղության և հարգանքի



Լուսինն Չափարյանի և Խորեն Պալյանի տուն-թանգարանի միջոցառման մասնակիցներ և հյուրեր



Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պասվիրակությունը Վիեննայում

Մայիսի 2-ից 5-ը «Բյոզենդորֆեր» ռոյալների գործարանի հրավերով Ավստրիայի մայրաքաղաք այցելեցին ԵՊԿ ռեկտոր՝ Սոնա Դովիաննիսյանը, դաշնամուրային ամբիոնի վարիչ՝ Կարինե Օհանյանը, միջազգային բաժնի վարիչ՝ Արկադի Ավանեսովը, ԵՊԿ ստեղնաշարային գործիքների ռեսուրսավրատոր Վիլլի Մարտիկյանը և ուսանողներ՝ դաշնակահարներ Նարե Սուքիասյանը, Արթուր Գրիգորյանը, Արմեն Պուչինյանը, Անդրեյ Կուրբետը, Շահանե Աղաքարյանը, ինչպես նաև ջութակահար Նորայր Մաղաքյանը, սաքսաֆոնահար Ալբերտ Նավասարդյանը, մեներգչուհի Էվիիրա Մարգարյանը:



Հայաստանի պատվիրակությունը Վիեննայի երաժշտության և կատարողական արվեստների համալսարանում



Բեթովենի տուն-թանգարանի բակում



ԵՊԿ ռեկտոր Սոնա Դովիաննիսյան, Թուրքմենիստանի արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Մուհամեդովիչ Մաշալով, Վիեննայի «Բյոզենդորֆեր» ռոյալների գործարանի խորհրդատու Օլգա Դուբեր

Այցի շրջանակներում ԵՊԿ ուսանողները հանդես եկան համերգով «Բյոզենդորֆեր Սալոն»-ում (Bösendorfer Salon), այցելեցին ռոյալների գործարան, Մոցարտի, Բեթովենի տուն-թանգարաններ, և Զնագույն գործիքների թանգարան, ինչպես նաև Վիեննայի երաժշտության և կատարողական արվեստների համալսարան՝ նվագեցին դափնիձուռ, հանդիպեցին ռեկտոր Ուլրիկե Սյուլիսի և դաշնամուրային ամբիոնի վարիչ Քրիստոֆեր Դիմտերհոլցերի հետ: Բացի այդ ուսանողներից ոմանք հնարավորություն ստացան ներկա գտնվելու հայտնի դաշնակահարներ Սերգեյ Բաբայանի և Դանիլ Տրիֆոնովի «Կոնցերտհաուս» համերգարահում կայացած հյուրախաղային համերգին:

Վիեննա կատարած այցի տպավորություններով մեզ հետ կիսվեց բակալավրականի 4-րդ կուրսի ուսանող, դաշնակահար՝ Նարե Սուքիասյանը: Առաջին հերթին նա նշեց, այն որ, անշուշտ, բոլոր ուսանողները անչափ տպավորված էին ուղեվորությունից: «Ինձ համար, Վիեննա կատարած այս համերգային ճամփորդությունը, ամոռանալի իրար թրծություններից է՝ «թռիչք դեպի երազանք»: Մենք քայլեցինք այն վայրերով, որտեղ ժամանակին քայլում էին Բեթովենը, Մոցարտը, Դալսերը, և էլի շատ ու շատ մեծ երա-

տասարդ երաժիշտները տեսան Շուբերտի և Բրամսի դաշնամուրները, դա հատուկ սրահ էր: Երիտասարդ երաժիշտները մեծ բավականություն ստացան այս ճամփորդությունից և, անկասկած, դա մեծ հետք է թողնելու իրենց կատարողական արվեստի վրա: Նարեի խոսքերով. «Տուն-թանգարաններ այցելելուց հետո, Վիեննայի կախարդական յուրահատուկ երաժշտական միջավայրում գտնվելուց հետո ես այլ ձև եմ ընկալում և կատարում նույն Բեթովենի դաշնամուրային ստեղծագործությունները»: Ուղևորության վառ ակնթարթներից է Բեթովենի թանգարանի պահոցի այցելությունը, որտեղ ուսանողները տեսան Բեթովենի գդալը, Մոցարտի և Բեթովենի ձեռագրերը, սևագրերը և այլն: «Այնտեղ ոչ բոլորին են թույլ տալիս մտնել: Սակայն իմանալով, որ մենք երաժիշտներ ենք, մեզ ուղեկցեցին պահոց»:

Այցելության զագաթնակետն էր մայիսի 3-ին Վիեննայի «Բյոզենդորֆեր Սալոն»-ում տեղի ունեցած համերգը: Այստեղ ԵՊԿ ուսանողների կատարմամբ հնչեցին ինչպես մենակատարային ստեղծագործություններ՝ Շահանե Աղաքարյանը կատարեց Ֆ.Լիստի *h-moll* սոնատը, Արթուր Գրիգորյանը՝ Ս.Պրոկոֆևի «Մարկագմենտ», Նարե Սուքիասյանը՝ Ա. Խաչատրյանի «Պոեն»-ը, Արմեն Պուչինյանը՝ Ա. Խա-

չատրյանի «Տոկկատ»-ը, Անդրեյ Կուրբետը՝ Մ. Ռավելի «Վալս»-ը, այնպես էլ դուետներ՝ Բաբայանյան-Դարությունյան «Հայկական ռապսոդիա», Ա. Խաչատրյան «Սուներով պար», և այլն: Ելույթ ունեցան նաև սաքսաֆոնահար Ալբերտ Նավասարդյանը Տակասի Յոսիմացուի «Fuzzy Bird» սոնատի կատարմամբ, մեներգչուհի Էվիիրա Մարգարյանը կատարեց Կոմիտասի «Օրոր»-ը և ջութակահար Նորայր Մաղաքյանը՝ Մ. Ռավելի «Գնչուհի» ստեղծագործությունը:

Վիեննա կատարած այցը նոր և շարունակական համագործակցության սկիզբ դարձավ: Մայիսի 18-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան հյուրերը նկատեց Վիեննայի «Բյոզենդորֆեր» ռոյալների գործարանի խորհրդատու Օլգա Դուբերին, ինչպես նաև Թուրքմենիստանի արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Մուհամեդովիչ Մաշալովին:

Հանդիպման ժամանակ ռեկտոր Սոնա Դովիաննիսյանը նշեց, որ Վիեննայի կատարողական արվեստի և երաժշտության համալսարանի կրթական ծրագրերի շարքում կա «Վիեննական հնչյունի» ֆակուլտետ և նա լիահույս է, որ ռոյալների հնարավոր ձեռքբերմամբ «Վիեննական հնչյուն»-ն իր հնչողությունը կտարածի նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի լսարաններում: Նա շնորհակալություն հայտնեց այցի, ամոռաց օրերի և համագործակցության համար և ի նշան երախտագիտության, Օլգա Դուբերին հանձնեց կոնսերվատորիայի «Կոմիտաս» անվանական հուշամեդալը:

Ռեկտորի հետ պաշտոնական հանդիպումից հետո կոնսերվատորիայի համերգային դափնիձուռ «Բյոզենդորֆեր»-ի ամուսնից Օլգա Դուբերը հավաստագրեր հանձնեց մայիսի սկզբին Վիեննա կատարած այցի մասնակիցներին, որից հետո ելույթ ունեցան ԵՊԿ դաշնամուրային ամբիոնի ուսանողներ՝ պրոֆեսոր Սերգեյ Մարաքյանի դասարանից Էլեն Դարությունյանը և պրոֆեսոր Վաղարշակ Դարությունյանի ուսանողներ՝ Մարգարիտա Միքայելյանն ու Նարե Սուքիասյանը:

Հանդիպման ժամանակ Տիկին Դուբերը նշեց, որ այս ծրագիրը գործարանի պատմության մեջ առաջին ուղիղ համագործակցությունն էր, որը կարելի է համարել հաջողված և ակնարկեց, որ Վիեննայում մինչև հիմա հիշում են Հայաստանի պատվիրակության հետ հանդիպումն ու մեր ուսանողների ելույթը:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿՈՆԱԿՈՍՅԱՆ
երաժշտագետ

«Երաժշտության եւ ստեղծագործական կրթության ոլորտում ԱՊՀ երկրների սամիթ»



Ալեքսանդր Ռիժնսկի, Ծովհնար Մովսիսյան

առաջ դրված պրոբլեմներին: ՅՈՒՆԵՍԿՕ-յի ծրագրային օրակարգում արդիական է գեղարվեստական կրթության կարևորության, արժևորման հարցը: Հայտնի է՝ ստեղծագործական բուհերը ստիպված են պայքարել դիմորդների ուշադրության համար՝ մրցակցելով IT ոլորտի մասնագիտությունների հետ:

Սամիթը տարիներ տևած աշխատանքի արդյունք է: Պետությունների մասնակցության թվով և ներկայացված արվեստների քանակով այս իրադարձությունը չունի նախադեպ: Հրավիրված էին այն երկրները, որոնց հետ ստեղծվել է կենդանի համագործակցություն:

Ամեն ինչ սկսվել էր 2011-ին, երբ Միսկուն ստորագրվել էր ԱՊՀ երկրների համար մշակույթի և արվեստի ոլորտում կրթության զարգացման հայեցակարգ: 2014-ին ՊՈՒՆԵՍԿՕ-ի Ակադեմիան երաժշտության և կրթության ասպարեզում

ստացել է բազային կազմակերպչի կարգավիճակ:

2023-ին սամիթին Մոսկվա էին հրավիրվել 8 երկրի 16 պատվիրակ: Հայաստանը ներկայացնում էին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, ի դեմս գիտական գծով պրոռեկտոր Ծովհնար Մովսիսյանի և Գեղարվեստի պետական ակադեմիան, ի դեմս Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Նուրե Մինասյանի:

Մասնակիցներին հանձնարարված էր ցույց տալ ոչ թե նվաճումները, այլ՝ խոսել գոյություն ունեցող խնդիրների, պրոբլեմների մասին:

Արվեստագիտության թեկնածու Ծովհնար Մովսիսյանն իր ելույթում բարձրացրել է տարբեր հարթությունների վրա գիտական մրցակցության հարցը, առաջարկել է մտքերի փոխանակումներ անել դոկտորանտուրայի ներդրման վերաբերյալ, կիսվել գիտական կոչումների, աստիճանների տարանջատման հարցում մասնակիցների ունեցած փորձով (օրինակ, ինչպես են տարբերվելու «արվեստագիտության դոկտոր»-ի գիտական կոչում ունեցողները, եթե բոլոր «PhD»-ները դոկտոր են կոչվելու):

Համաձայնվել են ընդլայնել գոյություն ունեցող համագործակցությունը, իրականացնել ուսանողների ակադեմիական փոխանակումներ, քանի որ ավելի կարևոր պրոբլեմ է մանկավարժների մոտիվացիան, պայմանավորվել են նախաձեռնել դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրեր (պատրաստ են 3-5 հոգանոց դասախոսական խումբ գործուղել), կազմակերպվել համատեղ մրցույթներ և փառատոներ, ստեղծել փոխհամագործակցության նոր ձևեր՝ կիրառելով հեռավար տեխնոլոգիաներ:

Ռեկտոր Ա. Ռիժնսկին առաջարկել է անցկացնել նոր մասնագիտացումների դասընթացներ, մասնավորապես դաշնամուր լարողների և հնչյունային ռեժիսորների: Ծովհնար Մովսիսյանը ճշտեց, որ ՊՈՒՆԵՍԿՕ-ի ակադեմիայում այդ մասնագիտացումները նոր են ներդրվել, մեկ տարի հետո կունենան առաջին շրջանավարտները և արդյունքները պարզ կլինեն: Պատրաստ են ապահովել կացության պայմաններ, միաժամանակ կիրառել օնլայն ուսուցում՝ տեսական դասընթացների ձևով, իսկ գործնական պարապմունքներն իրականացնել առկա, սեղմ գրաֆիկով:

ԵՊԿ գիտական գծով պրոռեկտորը նշեց, որ նկատելի էին, բարձրաձայնվում էին բոլոր մասնակիցների Հայաստանին աջակցության և համախոհ լինելու տրամադրությունները: Ավեստագիտության դոկտորներ Ալեքսանդր Ռիժնսկին և Դիմա Կիմարսկայան, ովքեր երկու շաբաթ առաջ Ս. Ռախմանինովի հոբելյանի առթիվ ՊՈՒՆԵՍԿՕ-ի Ակադեմիան բարձր մակարդակով ներկայացրել էին Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, Մոսկովյան երկօրյա սամիթի ընթացքում իրենց խոսքում կարևորում էին մեր դասախոսական կազմի դերը, ամենօրյա աշխատանքը՝ չնայած պատերազմի հետևանքներին:

Սամիթը ցույց տվեց ԱՊՀ երկրների մշակութային տարածքի միասնականությունը, ընդհանուր ձգտումները և փոխհամաձայնության բարձր մակարդակը: ՊՈՒՆԵՍԿՕ-ի Ակադեմիայի պրոռեկտոր, ՅՈՒՆԵՍԿՕ-յի ներաշխարհի Դիմա Կիմարսկայան վստահ է. «Կլինենք ավելի մոտ, կհասկանանք միմյանց և ավելի շատ կհամագործակցենք: Մշակույթը, արվեստը և կրթությունը թույլ չեն տալիս մարդկանց կորցնել փոխազդեցության կամուրջները»:

Екатеринбург: фестиваль, посвященный Араму Хачатуряну

Арам Хачатурян, чье 120-летие последует в ближайшие дни, один из самых известных в мире композиторов. Между тем в последние десятилетия его произведения почти не звучали в филармонических залах, как и многих других композиторов советской эпохи. Хачатурян стал фигурой умолчания, огромный пласт его сочинений в самых разных жанрах – музыкой, "которую мы потеряли". Но, к счастью, не везде и не навсегда.

В Свердловской филармонии, известной своим нестандартными подходами, решили не просто "отметиться" юбилейным концертом, а провести Международный фестиваль "Арам Хачатурян. Արամ Խաչատրյան". Цель форума многогранна. Конечно, представить портрет юбиляра, при этом не композитора из "славного прошлого", а художника, чьи со-



**Карэн Шахгалдян, Сона Барсегян,
Михаил Смирнягин**



**Карэн Шахгалдян и Уральский молодежный
филармонический оркестр под управлением
Дмитрия Филатова**



Сона Барсегян и Арцвик Демурчян

чинения звучат вполне актуально и сегодня. А еще – открыть Хачатуряна слушателям новых поколений не только как автора нескольких популярных шлягеров, но композитора с широким диапазоном музыкальных жанров – от крупных симфонических полотен до камерных творений. Явить его общепризнанный международный масштаб и постоянную связь с родной Арменией. Прочертить впечатляющий творческий путь. Напомнить о связях композитора с Уралом, где он провел несколько лет в эвакуации, задумал и написал свои знаменитые сочинения, где в прежние годы всегда звучала его музыка, в том числе и под его дирижерским управлением.

Музыкальная программа четырех филармонических вечеров сложилась как идеальный сонатный цикл: открытие и финал в виде симфонических концертов были роскошным обрамлением. В середине – два камерных вечера, музыка для солирующих инструментов: скрипки, альты, виолончели, арии для голоса и фортепиано, знакомство с неизвестным Хачатуряном, лириком и философом. Тонких ценителей камерного музицирования набирались полные залы, не говоря уже о симфонических программах – там яблоку негде было упасть. А еще было фестивальное превью, концерт в одном из областных филармонических филиалов, в Краснотурьинске. Фестиваль—оммаж в целом сложился как процесс постижения уникального художественного мира одного

их крупнейших композиторов XX столетия.

Открывать публике этот мир собрались в Екатеринбурге известные армянские и российские музыканты, а также два оркестра Свердловской филармонии: Уральский филармонический (УАФО) и Уральский молодежный (УМСО) под предводительством лидера "молодежки" Дмитрия Филатова. "Взрослому" оркестру досталось открытие и крупнейшие концептуальные сочинения Хачатуряна: Концерт-рапсодия для виолончели с оркестром и масштабная Вторая симфония "с колоколом", созданная в годы войны. Солировал победитель Конкурса Чайковского 2011 года Нарек Ахназарян, представивший крупным музыкантом, у него виртуозная техника, а у виолончели – богатый звук.

Молодежный оркестр на закрытии фестиваля порадовал

ном мире коллектив из Армении стал и движущей силой фестивального проекта.

К обширной музыкальной программе было решено добавить выставку "Арам Хачатурян. Лица эпохи". И надо было видеть филармоническую публику, замороженно застывшую перед историческими фотографиями. Вот знаменитое фото – трио великих советских композиторов: Прокофьев, Шостакович, Хачатурян. Вот – в семейном кругу. Или многочисленные поездки по миру, где композитора, оказывается, принимали как первых космонавтов: встречи с европейскими и восточными царствующими особами, самыми знаменитыми западными артистами. Прекрасная экспозиция и лекция Армине Григорян перед концертом – открытием давала возможность ощутить, хотя бы в приближении, масштаб личности большого художника и общественного деятеля, а еще выдающегося педагога: в его классе учились композиторы Андрей Эшпай, Микаэл Таривердиев, Алексей Рыбников, Владимир Дашкевич и многие другие...

Всеобъемлющая полнота и гармоничность жизнеощущения Хачатуряна сегодня воспринимаются почти как утраченный рай. Он, несомненно, был художником большого стиля и сокрушительно-го темперамента, его музыка всегда предлагает целостную

публику самым известным и любимым, а потому, кстати, и очень сложным: звучали сюиты из балетов "Спартак" и "Гаянэ", а также легендарный Скрипичный концерт Хачатуряна – пожалуй, единственное инструментальное сочинение, которое никогда не исчезало из мировой концертной практики. Его играл известный скрипач Карэн



Выставка "Арам Хачатурян. Лица эпохи"

Шахгалдян, соединяя в своей трактовке темперамент и мягкую интеллигентность. В камерных программах фестиваля на сцену выходили альтист Максим Новиков, пианистка Сона Барсемян и сопрано Арцвик Демурчян, а также екатеринбургский кларнетист Михаил Смирнягин. Но львиную долю всех камерных сочинений играли музыканты из Трио имени Хачатуряна: Шахгалдян, виолончелист Карен Кочарян и пианистка, профессор Ереванской консерватории и глава Дома-музея Хачатуряна Армине Григорян. Хорошо известный в музыкаль-



картину мира, раскрывающуюся в предельных контрастах от грандиозного до интимного. А прекрасные мелодии и зажигательные ритмы, как показал фестиваль, всегда будут иметь безотказную силу воздействия.

https://dzen.ru/a/ZGszAU9XGTdwPgv6?fbclid=IwAR12xiWNsZHbywtKaAYklhjAqGm2tyV0S0dUmFHfoEyVEGeCHL0r_IH83eM

*Սերգեյ Ռախմանինով-150. միզոպառումներ՝
նպիրված անվանի կոմպոզիտորի հորքելյանին*



 Արամ Խաչատրյանի տուն-
թանգարանում մայիսի 2-ին՝ ժամը
18:00-ին, կբացվի «Սերգեյ
Ռախմանինով. ես ռուս կոմպոզի-
տոր եմ...» խորագրով ժամանակա-
վոր ցուցադրությունը՝ նվիրված մեծ կոմպոզիտորի
ծննդյան 150-ամյակին:

Ցուցահանդեսը կազմակերպվել է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի և Ռուսաստանի երաժշտության ազգային թանգարանի համագործակցությամբ:

Յուլցադրությունը ներկայացնում է Սերգեյ Ռախմանինովին՝ որպես կոմպոզիտոր, դաշնակահար և դիրիժոր: Կցուցադրվեն արխիվային հազվագյուտ փաստաթղթեր և լուսանկարներ, կոմպոզիտորի ընտանիքի ծագումնաբանական ծառը և ստեղծագործությունների ձեռագրերը: QR կոդերի միջոցով այցելուներին հնարավորություն կընձեռվի ունկնդրելու Սերգեյ Ռախմանինովի ամենահայտնի ստեղծագործությունների արխիվային ձայնագրությունները՝ հեղինակի և նշանավոր երաժիշտների կատարմամբ:



Յուզահանդեսի բացումը կուղեկցվի համերգային ծրագրով՝ հաչատրյանի անվան տրիոյի, Ռուբեն Կոզինի (դաշնամուր), Արծիվի Դեմուրչյանի (ստարաճո), Տիգրան Հակոբյանի (տեմբուր), Էլենա Վարդապարյանի (դաշնամուր) մասնակցությամբ: Կհնչեն Ս. Ռախմանինովի ստեղծագործու-

թյուրմներ:

Մայիսի 3-ին «Ս. Ռախմանինով-150» հորեկանական միջոցառումների շրջանակում ՀՀ զԱԱ արվեստի ինստիտուտում տեղի կունենա «Ռախմանինով. ռուս կոմպոզիտոր կամ աշխարհի քաղաքացի» խորագրով կլոր սեղանը: Կմասնակցեն Ռուսաստանի երաժշտության թանգարանի գլխավոր տնօրեն Մ. Բրիզգալովը, զԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Ա. Ասատրյանը, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Ա. Գրիգորյանը, առաջատար գիտաշխատողներ:

Ս. Ռախմաննինովին նվիրված հանդիսությունները Երևանում անցկացվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՌԴ մշակույթի նախարարությունների աջակցությամբ:

Միջոցառումներին աջակցում են նաև Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը և ԳԱԱ արվեստի ինստիտուտը:

<https://escs.am/am/news/16235>

ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ԱԶԳԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԵՆԱԿՍՅՈՒՆ

Երաժշտաբուժությանը նորոգվելու չափապարիզ

1 Լուսինե Ջաքարյան տուն-թանգարանի էլեկտրոնային էջում նախապես տրված հայտարարության համաձայն վերջերս տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված երաժշտաբուժությանը. որպես բանախոս հրավիրված էր Մաշտոցի անվան Մատենադարանի Արվեստի պատմության և զրչության կենտրոնների ուսումնասիրման բաժնի գիտաշխատող, Կոմագիտորների և երաժշտագետների միության անդամ Արփի Վարդումյանը:

Միջոցառմանը ներկա էին երգեհոնահար Զարուբյուն Թազվորյանը, բանաստեղծ Կորյուն Առաքելյանը, գործարար Գագիկ Բադալյանը, Զայաստանի և Ռուսաստանի կինեմատոգրաֆիստների միությունների անդամ, կինոգետ, «Ֆիլմ» ամսագրի խմբագիր Ռոբերտ Մաթոսյանը, Իսպանիայից ժամանած բանաստեղծուհի Այա Եղիազարյանը, քիմիկոս-տեխնոլոգ Սանդուխտ Կարապետյանը, Զայ-ռուսական (սլավոնական) համալսարանի դոցենտ, բանասիրական գիտ. թեկ. Գոհար Առաքելյանը, կենսաբանական գիտ. թեկ. Իրինա Դանիելյանը, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աշոտ Օհանյանը, փրիսիպալ գործարար, արդեն վաղուց Զայաստանի բնակիչ

թյան մասին միջնադարյան պատկերացումները, որոնք գրավել են Կոմիտասի ուշադրությունը էջմիածնում աշխատելու ժամանակ: Նա գտնում է, որ հին աշխարհի իմաստուն՝ երաժիշտները երաժշտությամբ հիվանդներ բուժելու գրեթե բոլոր գաղտնիքները երևան են հանել, այսինքն՝ նրանք երգում էին հիվանդներին բուժելու համար, քանի որ՝ ինչպես դեղ խմելն է ազդում հիվանդության վրա, այնպես էլ երաժշտությունն է լսողության միջոցով ազդում հիվանդի հոգեկան աշխարհի վրա:

«Պատահական չէ, որ դեռևս հին աշխարհի մեծ փիլիսոփա և մաթեմատիկոս Պյութագորասն էր ասում, որ հոգին երաժշտությամբ է ապրում, ընդգծեց Արփի Վարդումյանը:

Արփի Վարդումյանի խոսքը լրացրեց Լուսինե Ջաքարյանի տուն-թանգարանի տնօրեն, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոէթիկայի ամբիոնի Զայֆա Զայաստանյան մասնաճյուղի վարիչ, արվեստի սոցիոլոգ, փիլիսոփայական գիտ. դոկտ. Սուսաննա Դավթյանը.

«Երաժշտությամբ բուժելու առաջին գիտական փորձերը կատարվել են ԱՄՆ-ում XIX դարի վերջին: Նյարդաբան Ջեյմս Կորնինգը նյարդային և հոգեկան հիվանդություններ



Տուն-թանգարանի հյուրերը և միջոցառման մասնակիցները



Մաղեն Ասրյան, Սուսաննա Դավթյան



Գոհար Վարդումյանի ելույթը

Գևորգ Բեյազբեյյանը, ԶԳ ԳԱԱ Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Զին դարերի պատմության բաժնի վարիչ, նաև Բյուրուսի անվան ռուսաց և օտար լեզուների համալսարանի դոցենտ Գոհար Վարդումյանը, լրագրող Ռիմա Պետրոսյանը, երգչուհի Մաղեն Ասրյանը, դաշնակահար Վարդուհի Սուքիասյանը, Լուսինե Ջաքարյանի և Խորեն Պալանյանի հարևանուհին՝ պետական, քաղաքական գործիչ Լիտվին Դազարյանի կինը՝ Նելլի Դազարյանը, Առնո Բաբաջանյանի, Շառլ Ազնավուրի անվան երաժշտական ուսումնարանների ուսանողները և այլք:

Արփի Վարդումյանը ներկայացրեց ուշագրավ տեղեկություններ՝ նվիրված հայ միջնադարյան երաժշտությանը: Նա հատկապես կանգ առավ Զովհաննես Պլուզ երգնկացու ժառանգության, Կոմիտասի գրած վերջին հոգվածի վրա, որը նոր բացահայտումներ է բերում միջնադարյան Զայաստանում երաժշտաբուժության ակունքների վերաբերյալ:

Ներկայացնե՞նք մի հատված Արփի Վարդումյանի զեկուցումից և ուսումնասիրություններից.

«Կոմիտասը տարբեր տեսանկյուններից ուսումնասիրված է, բայց դեռ չենք գիտակցել, որ նա մեր ժամանակների երաժշտաբուժության հիմնադիրն է: 1915 թ. մարտին նա իր վերջին հոգվածը՝ «Բժշկություն երաժշտությամբ» տպագրել էր Թեոդիկի «Ամենուն տարեցույցը» պարբերականում: Դա փոքրիկ, բայց՝ բովանդակալից հոդված էր: Նույնիսկ չիսացրե՞ց կամ ժամանակ չունեցավ ուսումնասիրելու, թե ով է այդ ձեռագրի հեղինակը, որովհետև այն ժողովածու էր և բազմաթիվ հեղինակներ էին նշված հիշատակարանում: Ձեռագիրն էջմիածնում էր: Սակայն հետո տեղափոխվեց Մատենադարան, և ես պարզեցի, որ դա Զովհաննես Պլուզ երգնկացու «Մեկնություն քերականի» աշխատությունն էր:

Երբ կարդացի Կոմիտասի այդ հոդվածը, ուսումնասիրեցի ու հասա մինչև Մխիթար Զերացի... Միջնադարում առանձնացնում էին երաժշտության երկու տեսակ՝ մարդկային և աստվածային: Աստվածայինը հենց հոգևոր երաժշտությունն էր: Մարդկայինը՝ խնջույքային, գուսանական երաժշտությունը: Բայց, ի վերջո, այստեղ ևս պահպանվել են դասական, մնայուն արժեքները:

Միջնադարում, ճիշտ է, տեսություններ կային երաժշտաբուժության վերաբերյալ, սակայն որևէ երկում երաժշտաբուժությունը առանձին չի լուսաբանված: Բազմաթիվ ձեռագրեր պիտի պրպտել երաժշտաբուժության մասին առանձին տեղեկություններ գտնելու համար: Եվ սա այդ ձեռագրերից մեկն է եղել:

Արփի Վարդումյանը երկար պրպտումների շնորհիվ պարզել է, որ այս ձեռագրի հեղինակը XIII դարի Կիլիկյան Զայաստանի անվանի փիլիսոփա, բնագետ, քերական, բանաստեղծ, երգահան և բժիշկ Զովհաննես Պլուզ երգնկացին է, որը սույն աշխատության գաղափարը հղացել է Զոմկլալյուն: Երկի վերնագիրն է «Հավաքումն մեկնութեան քերականին» և հենց այստեղ են արժարժված երաժշտաբուժու-

ունեցողներին լիարժեք բուժելու նպատակով օգտագործեց դասական երաժշտություն: Հատկանշական է, որ նա ընտրեց ոչ թե Մոցարտի հոգեհիմա, լուսապայծառ երաժշտությունը, ոչ թե Վերդիի ժողովրդական, հեշտ ընկալելի երաժշտությունը, ոչ թե Բեթովենի վեհաշունչ պաթոսիկ երաժշտությունը, ոչ թե Բախի եզակի բազմաձայնությունը, այլ Վազների դժվարամարտ երաժշտությունը: Նրա փորձը ունեցավ հաջողություն և շատ շուտով այն տարածվեց ոչ միայն ԱՄՆ-ում, այլև Եվրոպայում:

...Երաժշտաբուժությունը հայտնի է եղել հին Զինաստանում, Զնդկաստանում, Զուլաստանում, ինչպես նաև Զայաստանում: ՀԵՏԵՎԵՐԱՐ, ԱՅՆ ՄԵԶԱՆՈՒՄ ՈՉ ԹԵ ՊԵՏԵ Ե ԶԱՐԳԱՆԱ, ԱՅՆ ՎԵՐԱԾՆՎԻ...

Սուսաննա Դավթյանը ուշադրություն հրավիրեց այն տխուր հանգամանքի վրա, որ այսօր բոլոր մեխանիզմներով ազդում են նոր սերնդի ենթագիտակցության վրա:

«Այսպես օրինակ. երևանում «Չիլոլինո», «Պիլոլինո» խանութներից ձեռք են բերում օրորոցներ, որտեղ պառկած նորածին երեխայի ականջը լցվում է ամերիկյան, արտասահմանյան «երգով»: Ինչո՞ւ: Մենք մեր երաժշտությունը չունեն՞ք: Ի՞նչ չքնաղ օրորոցայիններ ունենք: Ինչպես իրավացիորեն նշում է երաժշտագետ Արթուր Շահնազարյանը, հայ սերնդի համար ոչ մի գործոն այնքան ավերիչ չի եղել, որքան ՋԼՄ-ներով մատուցվող ապագային երաժշտությունը: Օտար ելեկտրոնիկ այդ հավանշակությո՞ք քայքայում է երիտասարդի օրգանիզմը: Դա շատ վտանգավոր է, որովհետև մեր երեխաները խելք ունեն, կարող են հիմար բաները խելք բանից տարբերակել, չընդունել: Բայց, երբ որևէ բան իրենցից կախված չէ, մի ականջից մտնում է, և մարդն էլ չի հասկանում՝ ինչ է իր հետ կատարվում: Խելեղությունում է մարդու գիտակցությունը, հոգեկան աշխարհը:

Պյութագորասին հիշատակեն, որն ասում էր, թե ծնված օրից երեխայի հոգին պետք է լցնել ազգային երաժշտությամբ: Սա ճապոնացիները գենք են դարձրել. նույնիսկ համալսարաններում իրենց ազգային երգն են սովորեցնում: Իսկ մենք հաճախ օտարամուլ ենք, երբեմն էլ՝ ստրկամիտ... Շատ վատ է:

Իր հերթին թանգարանի հյուրը Գոհար Վարդումյանը՝ որպես մանկավարժ, ուշադրություն հրավիրեց մի անցանկալի երևույթի վրա.

«Ցավալի է, որ երիտասարդները չեն ծանաչում մեր մեծերին՝ Գոհար Գասպարյան, Լուսինե Ջաքարյան... Ես նաև դասավանդում եմ բուհում: Ու երբ հաճախ զարմացած հարցնում են.

«Ո՞վ է Լուսինե Ջաքարյանը, Գոհար Գասպարյանը...

Ասում են.

«Երեխաներ, չե՞ք պատկերացնի՝ որքան ամոթ է, որ դուք չգիտեք...»

Լուսինե Ջաքարյանը ազգային արժեք է: Ես ինքս ազգային մշակույթ եմ դասավանդում: Հայ երիտասարդն անպա-

ման պիտի իմանա իր ազգային մշակույթը: Եվ վստահ եղե՞ք, որ նրանք ուղղակի ծարավի են իրենց ակունքները ճանաչելուն, մեր ազգային մշակույթն իմանալուն:

Եվ նրա հետ համամիտ էին ներկաները: Առանց ազգային մշակույթի միջոցով ինքնաճանաչման հասնելու հնարավոր չէ շարունակել մեր երթը պատմության մեջ:

Երգահան, երգիչ, գրող, ճարտարագետ Արսեն Զամբարյանի ստեղծագործությունները հենց ազգային ոգու մարմնավորում են: Նա ևս խոսեց երաժշտության բուժիչ ազդեցության մասին և կատարեց Կոմիտասի «Հով արե՛ք, սարեր ջան» երգը՝ գեղագիտական մեծ հաճույք պատճառելով ներկաներին:

Երգչուհի Մաղեն Ասրյանի կատարմամբ «Պարաբաղի հորովելը» միշտ հիացնումք է պարզե՛լ հայ մարդուն՝ նրան ամուր կապելով իր հայրենի բնօրրանին: Ուրեմն, երգը նաև

ազգապահպան ազդեցություն ունի: Եվ երգչուհու հիանալի կատարումը ըմբռնեցին նաև միջոցառման հյուրերը:

Վվանդության մեջ սերնդի համար կրթադաստիարակչական նշանակություն են ունեցել նաև ժողովրդական կիրառական արվեստները, որոնց դպրոցներն այսօր պահպանության և խիստ հոգածության կարիքն ունեն: Եվ պատահական չէ, որ այս միջոցառումն ուղեկցվում էր նաև ցուցահանդեսով: Շիրակի շրջանից բազմաթիվ շնորհալի երեխաներ և վարպետներ ներկայացել էին իրենց գորելենագործ աշխատանքներով: Այդ փաստը ևս չէր կարող վրիպել ներկաների ուշադրությունից:

Բանաստեղծ Կորյուն Առաքելյանն իր ելույթում նշեց.

«Ուրիշ թանգարանների էքսպոնատները նույնն են: Բայց Լուսինե Ջաքարյան տուն-թանգարանն ամեն անգամ ապշեցնում է: Ամեն անգամ նոր, հետաքրքիր թեմա է, նոր, յուրօրինակ մթնոլորտ: Ամենակարևորն այստեղ միշտ ներկա են երիտասարդները:

Երկար տարիներ Ռուսաստանում բնակված, այսօր ընտանիքով Զայաստանում հաստատված գործարար Գագիկ Բադալյանը նշեց, որ արդեն երրորդ անգամ է լինում Լուսինե Ջաքարյան տուն-թանգարանում: Ամեն անգամ հիացած է միջոցառումների բովանդակությամբ, անցկացման բարձր մակարդակով, ու ոճով, հյուրերի ակտիվ ընդգրկվածությամբ:

Ելույթ ունեցավ երգչուհի (սոպրանո) Անի Գևորգյանը՝ կատարելով «Սուրբ-սուրբ»-ը: Հանդես եկավ Շառլ Ազնավուրի անվան երաժշտական քոլեջի երկրորդ կուրսի ուսանող Սարգիս Մոսիսյանը, որին նվագակցեց Զարուբյուն Թազվորյանը:

Միջոցառումն անցավ ջերմ ու անկեղծ մթնոլորտում: Իսկ ներկաների խնդրանքով թանգարանի տնօրեն Սուսաննա Դավթյանի կողմից դաշնամուրային մի քանի կատարումներն ամբողջացրեցին օրվա հաճելի ակնթարթները:

Ներկաները թանգարանից հեռացան՝ իրենց հետ տանելով նոր բացահայտումներ: Եվ կարծում ենք, որ այդ միջոցառմանը մասնակից ամեն ոք նորից կխորհի ազգային ժառանգությունը պահպանելու ու զարգացնելու բոլոր մտահոգությունների շուրջ: Այդ մասին ժամանակին նշել է նաև ինքը՝ Խորեն Պալանյանը.

«...Մենք կորցնում ենք մեր ազգային հատկանիշները, որոնցով բնորոշվում էինք, տարբերվում էինք մյուսներից: Սա արդեն հոգուն ուղղված հարվածն է: Ավետարանն ասում է՝ հոգին սպանողից վախեցե՛ք: Այսպես շարունակվել չի կարող, շարունակությունը հայաթափումն է, որը ամենամեծ աղետն է համարում»:

ՀԱՍՄԻԿ ՊՈՐՏՈՅԱՆ
լրագրող, Լ. Ջաքարյանի տուն թանգարանի աշխատակից

Մեկնարկել է Պենդերեցկու անվան ժամանակակից դասականների 3-րդ փառատոնը

1 ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Երևանում մեկնարկել է Պենդերեցկու անվան ժամանակակից դասականների երրորդ փառատոնը, որն այս տարի նվիրված է մեծանուն լեհ կոմպոզիտոր Քիշտոֆ Պենդերեցկու 90-ամյակին: Բացման համերգին ներկա էին ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, կոմպոզիտորի այրին՝ Էլժբետա Պենդերեցկան:

Փառատոնի կազմակերպիչն է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը: Բացման համերգին հնչել են Պենդերեցկու թիվ 2 սիմֆոնիան՝ «Սուրբմեդյան սիմֆոնիա», կոնցերտը՝ գրված ֆլեյտայի և կամերային նվագախմբի համար, ինչպես նաև Յոհաննա Վնուկ-Նազարովայի «Ժամանակն անցնում է. Պասակալիա» ստեղծագործությունը՝ նվիրված Էլժբետա Պենդերեցկային: Յոհաննա Վնուկ-Նազարովան, ի դեպ, դիրիժորություն և կոմպոզիցիա է ուսանել Քիշտոֆ Պենդերեցկու մոտ: Յոհաննա Վնուկ-Նազարովան նույնպես ժամանել էր Երևան և ներկա էր փառատոնի բացմանը:

Երեկոյի ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ է ունեցել ճանաչված ֆլեյտահար Նոյեմի Գյորի: Համերգը ղեկավարում էր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը:

Փառատոնի առաքելությունն է հայ երաժշտասերներին հաղորդակից դարձնել համաշխարհային ժամանակակից դասական երաժշտությանը, ծանոթացնել մերօրյա կոմպոզիտորների հետ, ինչպես նաև վառ պահել Քիշտոֆ Պենդերեցկու անունը:

Սերգեյ Սմբատյանի ընդգծմամբ՝ Պենդերեցկին իր կոմպոզիտորական արվեստով երաժշտական նոր լեզու է ստեղծել և մնացել պատմության մեջ. մեծ պատասխանատվություն է անցկացնել լեզունդար կոմպոզիտորի անունը կրող փառատոն: Նրա դիտարկմամբ՝ տարիներ շարունակ սերտ համագործակցելով Պենդերեցկու հետ՝ թե՛ ինքը, թե՛ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ոգևորվել են նրա արվեստով, մեծ մասերոյի հետ շփումը հարստացրել է բոլորին:



Էլժբետա Պենդերեցկայա



Նոյեմի Գյորի (ֆլեյտահար), Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, ղեկավար՝ Սերգեյ Սմբատյան

Ներկայացնենք, որ առաջիկա օրերին Պենդերեցկու անվան ժամանակակից դասականների երրորդ փառատոնի շրջանակում տեղի կունենա կամերային և սիմֆոնիկ և երեք համերգ, որոնց ընթացքում կհնչեն հայ և արտասահմանյան ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ, որոնց մեծ մասը Հայաստանում կատարվում են առաջին անգամ:

<https://escs.am/am/news/16210>

ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ «ՔՐԻՍՏԱՎՈՐ ԿԱՐԱՄՈՒՐ 170»

Երաժշտական ցանկացած իրադարձություն տոն է երաժշտագետների և իհարկե երաժշտասեր հասարակության համար:

Հայաստանի Կոմպոզիտորների միությունն Արարատյան Հայրապետական Թեմի գործընկերությամբ՝ օրերս կազմակերպել է Քրիստափոր Կարա-Մուրզայի 170-ամյակին նվիրված երգչախմբային փառատոն:

Փառատոնի մեկնարկը տրվել է սույն թվականի ապրիլի 28-ին, Կոմպոզիտորների միության համերգասրահում:

Փառատոնի բացումն սկսվեց Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի օրհնությամբ և աղոթքով, որից հետո Հովհաննես սարկավազ Ներսեսյանը լսարանին ներկայացրեց Կարա-Մուրզայի քառաձայն պատարագի մեկնությունը, այնուհետև ներածական խոսքով հանդես եկավ երաժշտագետ Նարինե Ավետիսյանը, որը փառատոնի ընթացքում ներկայացրեց Կարա-Մուրզայի կենսագրության և ժառանգության վերաբերյալ կարևոր փաստեր:

Փառատոնի մեկնարկային փուլն իրենց ներկայությամբ պատվեցին Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանը, Հայաստանի Կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր Արամ Սաթյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը, կոմպոզիտորներ Ավետիս Բերբերյանը, Ստեփան Բաբաթորոսյանը:

Համերգաշրջանի այս փուլին մասնակցում էին «Աննա Մայիլյան» վոկալ տրիոն, դաշնակահար Էլեն Կիրակոսյանը, Երևանի Ղ.Սարյանի անվան արվեստի դպրոցի երգչախումբը (խմբավար՝ Գրիգոր Հարությունյան), Երևանի Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի երգչախումբը (խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան) և Երևանի Հայկանուշ Դանիելյանի անվան արվեստի դպրոցի երգչախումբը (խմբավար՝ Հասմիկ Ամատունի-Թորգոմյան):

Փառատոնի բացման հանդիսավոր արարողությանը հնչեցին Քրիստափոր Կարա-Մուրզայի, Ա. Բաբաջանյանի, Է. Հովհաննիսյանի, Ռ. Պետրոսյանի, Ս. Լուսիկյանի, Թ. Ալթունյանի, Ա. Սաթյանի, Ա. Ամիրխանյանի, Ս. Մավիսակալյանի, Ս. Շաքարյանի, Գ. Հարությունյանի խմբերգային ստեղծագործություններն ու մշակումները:

Համերգի մեկնարկային օրն արդյունավետ էր Կարա-Մուրզայի անձի և գործունեության հանրայնացման, ինչպես նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների հնչեցման առումներով:

Փառատոնը եռփուլ կհամերգաշար է, որի երկրորդ փուլը կայացավ մայիսի 18-ին, կրկին Հայաստանի Կոմպոզիտորների միության համերգասրահում: Այս անգամ ևս համերգը հանդիսապետում էր Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի օրհնությամբ և աղոթքով, որից հետո Հովհաննես սարկավազ Ներսեսյանը լսարանին ներկայացրեց Կարա-Մուրզայի քառաձայն պատարագի մեկնությունը, այնուհետև ներածական խոսքով հանդես եկավ երաժշտագետ Նարինե Ավետիսյանը, որը փառատոնի ընթացքում ներկայացրեց Կարա-Մուրզայի կենսագրության և ժառանգության վերաբերյալ կարևոր փաստեր:

սարդ արքեպիսկոպոս Կոնյանը:

Համերգին ներկա էր կոմպոզիտորների և արվեստագետների նույն հանձնախումբը, որին միացել էին նաև Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը և բանաստեղծ Լևոն Բլբուլյանը:

Փառատոնի երկրորդ փուլի համերգին մասնակցում էին բացառապես Երևանի հանրակրթական դպրոցների երգչախմբերը. Լևոն Շանթի անվան 4-րդ դպրոցի (խմբավար՝ Գայանե Բարսեղյան), «Վարդանանց ասպետներ» 106-րդ հիմնական դպրոցի (խմբավար՝ Ներսես Մարգարյան), Գալինա Ստարովոյտովայի անվան 177-րդ հիմնական դպրոցի (խմբավար՝ Գայանե Սարգսյան), Հենրիկ Խաչատրյանի անվան 199-րդ հիմնական դպրոցի (խմբավար՝ Լիաննա Պարզյան), Լեոնիդ Ազգալոյանի անվան 200-րդ դպրոցի (խմբավար՝ Անի Եղիազարյան), Երևանի 156-րդ դպրոցի (խմբավար՝ Շուշանիկ Վասակյան):

Համերգի ընթացքում հնչեցին Քրիստափոր Կարա-Մուրզայի, Կոմիտաս վարդապետի, Կ. Օրբելյանի, Է. Միհրանյանի, Մ. Վարդապարյանի, Ս. Լուսիկյանի, Ռ. Պետրոսյանի, Ս. Մավիսակալյանի և Ժ. Բլբուլյանի ստեղծագործությունները:

Փառատոնը կամփոփվի հուլիսի 15-ին, Առնո Բաբաջանյանի անվան ֆիլիարմոնիկ փոքր դահլիճում:

Փառատոնի նպատակն է հանրայնացնել հայ խմբերգային արվեստի նախադարձ Քրիստափոր Կարա-Մուրզայի թողած հսկայական ժառանգությունը, տարածել հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները, ինչպես նաև մանկական երգչախմբերի մեջ սեր արթնացնել դեպի հայ խմբերգային արվեստը:

Համերգային այս հանգրվանում փառատոնի կազմակերպումը համարում ենք արդյունավետ և նպատակային:



Արամ Սաթյան, Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյան, Գրիգոր Հարությունյան

Փառատոնը մի քայլ է՝ ուղղված երգչախմբերի համախմբմանը, արվեստի, երաժշտական և հանրակրթական դպրոցների համագործակցությանը՝ ի շահ հայ երաժշտական արվեստի և հայկական մշակույթի:

ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
խմբավար, Ս. Սարգիս եկեղեցու երգեհոնահար

Մայիսի 18-ը Թանգարանների միջազգային օրը Լուսինե Չափարյանի եւ Խորեն Պալյանի տուն-թանգարանում

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի սաները իրենց դասախոսների հետ այցելեցին մայիսի 18-ին, Լուսինե Չափարյանի և Խորեն Պալյանի հյուրընկալ օջախը: Այդ, ես չեմ սխալվում, այն այդպիսին էր և նրանց ողջության օրոք, ինչպես ներկաներից շատերն էին վկայում, հետո պետք է հաջորդեր մայիսի 20-ը թանգարանային գիշերը, այնուհետև հունիսի 1-ը Լուսինե Չափարյանի ծննդյան օրը: Թանգարանը բացվել է 2019 թ. հենց հունիսի 1-ին՝ անվանի երգչուհու ծննդյան 82-րդ տարեդարձի օրը: Այն գտնվում է Կոլբացի փողոցի 42/3 հասցեում այն 2 սենյականոց բնակարան է, որտեղ ապրել են նրանք: Եվ կահավորված է այնպես, ինչպես նրանց ժամանակներում:



Լուսինե Չափարյանի և Խորեն Պալյանի տուն-թանգարանի հյուրերը և այցելուները

Լուսինե Չափարյանի և Խորեն Պալյանի տուն-թանգարանի ստեղծման աշխատանքներն սկսվել են 2016 թվականին Պալյան գերդաստանի նախաձեռնությամբ: Բնակարանը, որտեղ արվեստագետներն ապրել են 1968-2007 թվականներին տուն-թանգարանի վերածելու Խորեն Պալյանի ցանկությունն իրագործել է նրա եղբորորդին՝ բժիշկ Բաֆֆի Պալյանը, որի ֆինանսավորմամբ էլ 2018 թվականին իրականացվել են վերանորոգման աշխատանքները: 2019 թվականին Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսի ֆինանսական աջակցությամբ սկսվել են տուն-թանգարանի ցուցադրությունների աշխատանքները:

Ցուցադրության համակարգման և ձևավորման աշխատանքներն իրականացվել են «Քվադրոն» ճարտարապետական արվեստանոցի աջակցությամբ: Հյուրասենյակը վերստեղծվել է այնպես, ինչպես եղել է Լուսինե Չափարյանի և Խորեն Պալյանի ողջության օրոք: Թանգարանի հավաքածուի համալրման, հաշվառման, վերականգնման, թվայնացման և այլ աշխատանքներում աջակցել են Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, Եղիշե Չափարյանի անվան գրականության և արվեստի, Հայաստանի պատմության թանգարանները, Հայաստանի ազգային արխիվը, Հայաստանի համալսարանը և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը <https://hy.wikipedia.org/wiki/%D4%...> : Թանգարանում ներկայացված են տաղանդաշատ հայրենասեր և մշակութասեր երգչուհի



Ունկնդիրը և ԵՊԿ պրոֆեսոր Կարինե Մկրտչյանը, նրա դասարանի համերգը



Տնօրեն Սուսաննա Դավթյանը հյուրերի հետ

րանները, Հայաստանի ազգային արխիվը, Հայաստանի համալսարանի հետազոտությունները և ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը <https://hy.wikipedia.org/wiki/%D4%...> : Թանգարանում ներկայացված են Լուսինե Չափարյանի և ամուսնու՝ բանասեր, շարականագետ, մանկավարժ, ԵՊՀ երկարամյա և ԵՊԿ գրաբարի դասախոս, ծիսագետ և երգիչ Խորեն Պալյանի անձնական իրերը, փաստաթղթերն ու նոտաները, գեղանկարներն ու նամակները, գրադարանը և այլ ցուցանմուշներ՝ ամուսնական համատեղ կյանքի ընթացքում նրանց գործածած իրերը, Լուսինե Չափարյանի բեմական հագուստները, անձնական պարագաներ, ափսեներ, բաժակներ, կահույք և այլն: Հուշասրահից բացի, նրանց ննջասենյակը թանգարանում հարդարվել է որպես հանդիպումներ, կամերային համերգներ և միջոցառումներ կազմակերպելու սենյակ, խոհանոցը լրացված է մոնիտորներով, որոնք ցուցադրում են նրանց համերգային կյանքն ու գործունեությունը, շատ ջերմ ու տաք ունակություն է: Այս ջերմ մթնոլորտը, որը պահպանում է նաև հյուրընկալ տնօրեն, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոտեխնիկայի ամբիոնի Հայթա Հայաստանյան մասնաճյուղի վարիչ, արվեստի սոցիոլոգ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Սուսաննա Դավթյանը, ով եղել է նաև Լուսինե Չափարյանի կոնցերտմայստերն ու մտերիմը պատվական այս համերաշխ ամուլի: Նա նաև դասախոս է:

Տիկին Դավթյանն ամբողջ օրը ժամը 16.00-ից բաց դռների օր էր կազմակերպել տարբեր ուսումնական հաստատությունների համար, որոնց հետ այս ժամանակահատվածում թանգարանը համագործակցել է: 2019-ին առաջին համերգը, բացումն էր խոսքից հետո, իհարկե իրականացրեց Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան Խորեն Պալյանի (գրաբարի դասընթացի) սան «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-հրատարակիչ, երաժշտագետ Գոհար Շագոյանը՝ ով կազմակերպել և հրավիրել էր կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության պրոֆեսոր դասախոսական կազմին, նաև պրոֆեսոր և միջազգային մրցույթների դափնեկիր Մարգարիտ Սարգսյանի հետ:

մերգը՝

Ելույթ ունեցան կոնցերտմայստեր-պրոֆեսոր միջազգային մրցույթների դափնեկիր՝ Մարգարիտ Սարգսյանի հետ: Ուսանողների և նրանց կատարած ստեղծագործությունների երկացանկը բերում ենք ստորև.

Սյուզաննա Ավետիկյան՝ Հենդել - «Amiocory» և Կոմիտաս - «Կանչե կռունկ»
Աննա Հովհաննիսյան՝ Յ.Ս. Բախ - Արիա - Սք. Ծննդյան օրատորիայից,
Է. Աբրահամյան - «Աչքերը քո»
Արմինե Չարխչյան՝ Հենդել - «Ազգի արիան»
«Hisus Na Vin» օրատորիայից «Ազգի արիան, Կոմիտաս - «Գարուն ա»
Նարինե Գևորգյան՝ Ն. Գալանդեբեան (մշակումը՝ Մ. Սարգսյանի)- «Վարդերունեն» և «Մոռանալ»

Ժամը՝ 18.00-19.00 Պրոֆեսոր Կարինե Մկրտչյանի դասարանի սաները ելույթ ունեցան և կոնցերտմայստերն էր՝ Քրիստինե Սիրունյանը

Անի Յուխանյան՝ Կոմիտաս՝ «Հինար ես», Բ. Կանաչյան - «Օրոր», Նարեկ Բալդյան՝ Է. Աբրահամյան - «Ես երգիչ եմ», Շուշան Այվազյան՝ Կոմիտաս - «Քելեր, ցուլեր», «Շողեր ջան»,

Արտակ Այվազյան՝ Կոմիտաս - «Գարուն ա»:
Պետք է նշեմ, որ թե՛ դասախոս և թե՛ ուսանող բոլորին պատել էր հուզումն ու ակնածանքը: Բոլորը ցանկանում էին իրենց կատարողական արվեստն ամենայն գեղեցկությամբ ցույց տալ և կարծես հաշվետու էին այդ հիասթափեց երգիչների տան տերերի, հատկապես Աստվածային Լուսինե Չափարյանի առջև:

ԼԱՐԻԱՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Երգչուհի, լրագրող

Մայիսի 20-ը Թանգարանների գիշերի օրը Լուսինե Չափարյանի եւ Խորեն Պալյանի տուն-թանգարանում

Մայիսի 20-ին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի սաներն իրենց դասախոսների հետ այցելեցին Լուսինե Չափարյանի և Խորեն Պալյանի հյուրընկալ օջախը՝ Կոլբացի փողոցի 42/3 հասցեում: Լուսինե Չափարյանի և Խորեն Պալյանի տուն-թանգարանը



Պարոն Միքայելյանը Պարսկաստանից, ԵՊԿ դասախոս Լիլի Սարկոսյանի դասարանի սաների հետ, կոնցերտմայստեր՝ Մարիաննա Հայրապետյան



Ուղիովականները Լուսինե Չափարյանի և Խորեն Պալյանի տուն-թանգարանում տնօրեն՝ Սուսաննա Դավթյանի հետ

րանի բացված՝ 2018 թվականին, շնորհիվ Խորեն Պալյանի եղբորորդի՝ բժիշկ Բաֆֆի Պալյանի: Այդտեղ արվեստագետներն ապրել են 1968-2007 թվականներին <https://hy.wikipedia.org/wiki/%D4%...> : Թանգարանում ներկայացված են տաղանդաշատ հայրենասեր և մշակութասեր երգչուհի

կան համատեղ կյանքի ընթացքում: Լուսինե Չափարյանի բեմական հագուստները, անձնական պարագաներ, ափսեներ, բաժակներ, կահույքը և այլն:

Ջերմ մթնոլորտ էր տիրում Լուսինե Չափարյանի և Խորեն Պալյանի թանգարանում, որը պահպանում է նաև հյու-

րընկալ տնօրենուհին տիկին Սուսաննա Դավթյանը, ով եղել է Լուսինե Չափարյանի կոնցերտմայստերն ու մտերիմը պատվական այս համերաշխ ամուլի:

Տիկին Դավթյանն ամբողջ օրը ժամը 16.00-ից մինչև ուշ գիշեր բաց դռների օր էր կազմակերպել տարբեր ուսումնական հաստատությունների համար, որոնց հետ մշակութային կապեր հաստատել է ստեղծման օրից: Այս ժամանակահատվածում թանգարանը մշտապես համագործակցում է հանրապետության չորս ուսումնական հաստատությունների և բուհերի հետ:

Առաջին համերգը, երբ բացվեց թանգարանն իհարկե իրականացրեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Այն կազմակերպվել էր, որպես վեհաշուր ու անգնահատելի երգչուհի Լուսինե Չափարյանին մեծարանք և երախտագիտության զգացումով սիրելի դասախոսի՝ Խորեն Պալյանի հանդեպ, ով գրաբարի իր շնայլ գիտելիքներն էր փոխանցել իր սանին մեկ տարի համալսարանում և երկու տարի էլ կոնսերվատորիայում: Նրանց այդ առաջին երկու ուսանողների շնորհիվ էլ հրավիրել է այն ժամանակվա կոնսերվատորիայի ղեկան Մարգարիտ Բրուտյանը պրոֆեսոր Արմեն Բուդաղյանի քաջալերմամբ դասընթացը վարելու նաև կոնսերվատորիայում: Նրանք էլ դարձան Խորեն Պալյանի կոնսերվատորիական առաջին սաները 1978-ին առաջին կուրսի երաժշտագետ-ուսանողներ՝ Գոհար Շագոյանի իր ղեկավարի արվեստագիտության դոկտոր Նիկողոս Թահմիզյանի խորհրդով և կամակուրսեցի, ընկերուհին՝ Անահիտ Տեր-Կարապետյանը:

Իսկ հետագայում Գոհար Շագոյանը, ով այսօր՝ Կոնսերվատորիայի «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-հրատարակիչն է կազմակերպել և հրավիրել էր կոնսերվատորիայի ակադեմիական երգչ-

Մայիսի 20-ը Թանգարանների գիշերի օրը Լուսինե Չափարյանի եւ Խորեն Պալյանի տուն-թանգարանում

6 ցողնության պրոֆեսորադասախոսական կազմին թանգարանային գիշերին մայիսի 20-ին մասնակցելու համար, պրոֆեսոր և միջազգային մրցույթների դափնեկիր Մարգարիտ Մարգարյանի, ում հետ 2019-ին առաջին համերգը կազմակերպել էին թանգարանը բացվելու ժամանակներում: Իսկ այս օրը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության բաժնի ուսանողներն իրենց դասախոսների հետ էին հանդես էին գալիս Լուսինե Չափարյանին մեծարելով և երախտագիտությամբ լցված լիներով հարգարժան մտավորական և երգիչ Խորեն Պալյանի օջախում:

Ցանկանում են նշել, որ բոլոր մասնակիցները թե՛ դասախոսներն և թե՛ ուսանողները չէին կարողանում թաքցնել իրենց հուզումն ու բարեպաշտության զգացումով էին կատարում ու մեկնաբանում կոմիտասյան երգերը, որ ժամանակին հնչեցրել են մեծանուն երգիչները, ում տանն էին այստեղ նստած ու մեկնելու ունկնդրում: Ակնածանքը պատել էր բոլորին թե՛ այցելուներին և թե՛ համերգի մասնակիցներին:

Երգիչներն իրենց կատարողական արվեստով ցանկանում էին արժանանալ այս պատվին որ արժանացրել էին իրենց դասախոսները որ նաև որպես գործընկերներ էին և կատարում էին իրենց ուսանողների հետ մեկընդմեջ: Թանգարանի տնօրենը տիկին Սուսաննա Դավթյանը շատ ոգևորում էր իր հիացական խոսքերով ելույթ ունցողներին նկատելով նրանց հուզմունքն ու պատասխանատվության բարձր զգացումը:

20.05.2023 թ. Թանգարանային գիշերը Լուսինե Չափարյանի և Խորեն Պալյանի առջև իր ձևի մեջ հաշվետվություն էր և բարձր նշանոդ:

Սկզբում հանդես եկան ուսանողներ և շրջանավարտները ժամը՝ 16.00-ից սկսած կոնցերտմայստեր, պրոֆեսոր, միջազգային մրցույթների դափնեկիր՝ Մարգարիտ Մարգարյանի ղեկավարությամբ շարունակվեց: Ի դեպ անհրաժեշտ է նշել, որ Մարգարիտ Մարգարյանի Նիկոլ Գալանդեբեանի երգերի միաձայն մեղեդիների մշակումները, ձայնի և դաշնամուրի համար, շուրջ տաս տարի է գրավում է երևանցիների սրտերը: Այդ օրվա համերգում էլ դրանց կատարումը շատ տեղին էր ու պատշաճ մեկնաբանվեցին:



ԵՊԿ պրոֆեսոր,
դաշնակահար
Մարգարիտ
Մարգարյան

Մարիցա Թիլիկյան՝ Ն. Գալանդեբեան - «Ափսոսանք»,
Է. Հովհաննիսյան - «Հայոց վիշտը»,
Ռ. Մելիքյան - «Ուշ է արդեն»

Մերի Մարտիրոսյան՝ Է. Աբրահամյան -
«Այս ինչ լավ է սարի վրա»,
Է. Աբրահամյան - «Կարոտ»:

Այնուհետև ժամը 19.30-ից սկսած ելույթ ունեցան երգչուհի միջազգային մրցույթների դափնեկիր Լիլի Մարկոսյանի դասարանի սաները, կոնցերտմայստեր Մարիաննա Հայրապետյանի հետ:

Էլվիրա Մարգարյան՝ Կոմիտաս - «Օրոր»
Ալինա Ավագյան՝ Ա. Բաբաջանյան - «Վոկալիզ»
Լիլի Մարկոսյան՝ Կոմիտաս - «Ալագյազ բարձր սարին»,
Գրիգոր Նարեկացի՝ «Հավուն-հավուն»,

Մարիաննա Հայրապետյան՝ Կոնստանտին Պետրոսյան «Վոկալիզ» դաշնամուրի համար փոխադրումը տպավորիչ էր և խնդրանքով նաև երգը կատարվեց:

Լիլի Մարկոսյան՝ Կոմիտաս - «Կռուկ»:
Ինչպես նկատում էր Լիլի Մարկոսյանը հիացրեց իր կատարումներով վարպետության դաս ցուցադրելով իր սանե-



Լիլի Մարկոսյանի
դասարանի
սաները և հյուրերը



րին: Նաև անգուզական կոնցերտմայստեր Մարիաննա Հայրապետյանը իր դաշնակահարի աննկուն շնորքը մեզ ցուցադրեց: Կոնսերվատորիականներին ներկայացնում էր երաժշտագետ՝ Գոհար Շազոյանը և նաև նրանց դասախոսները:

ԼԱՐԻԱՆԱ ՆԵՐՍԻՍԱՆ
երգչուհի, լրագրող

Դասախոսություն-համերգ – շնորհանդես-բաց դասին ի հիշատակ Նեմեսիսի հեռուների

Նեմեսիսի հուշարձանի մոտ միջոցառման ամբողջ
ժամանակ անձրևեց
27.05.2023-ին ժամը 19:30-ին

Բացման օրը պետական այրերի, հատկապես երկարամյա գործիչ Կամո Արեյանի կողմից հնչեց, որ հուշակոթողը պատրաստված է այնպես, որ հարթակ է, որտեղ տեղի կունենան բաց դասեր, դասախոսություններ և այլ միջոցառումներ մատուցող սերնդին դաստիարակելու համար հայրենասիրական ոգով:

Հետամուտ ենք այդ պատգամին. կազմակերպիչ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-հրատարակիչ, երաժշտագետ՝ Գոհար Շազոյան. «Միջոցառման մասին իմանալով միացան նաև գործընկերներս՝ Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամակավարժական քոլեջը, տնօրեն՝ Արմեն Հարությունյանի ղեկավարությամբ, նաև Հելբերտ Ասատրյանը՝ ժողովրդական գործիչ՝ դուդուկ և շվի կատարողներ ընդգրկելով»:

Ներկայացվել է համերգային ծրագիրը Հելբերտ Ասատրյանը՝ ժողովրդական գործիքահարների իրենց նախընտրած ծրագրով:

Այսպես նշեց երաժշտագետ Գոհար Շազոյանը. - «Հրավիրել էի նաև Հայաստանի հանրային ռադիոյի խմբագիր և հեղինակ՝ Արուսյակ Դազարյանին իր Գերդաստաններ հաղորդաշարի բնաբանից բերելով տեղեկությունները մեր ընթերցողի համար, քանի որ խոսքը գնալու էր երկանյանների գերդաստանի մասին»:

«Արամ Երկանյան

Արևմտյան Հայաստանի խարբերող նահանգում՝ վիլայեթում, Փշատիկ անունով մի գյուղ կար, գյուղում՝ Սամվել անունով մի շատ բարձրահասակ մարդ: Հենց իր բարձր հասակի համար էլ նրան կոչում էին «Երգան»: Այս մարդը երկանյանների նախնին է, որ հետագայում գնում է Խարբերդից ու բնակվում էրգրումի նահանգում:

Երկանյանների մի ճյուղի գավակներից էր վրիժառու Արամ Երկանյանը, որ ծնվել է 1900 թ. Երզրումում: Նա դեռ պատանի էր, երբ թուրքերի կողմից արված զազանությունների, հայ ժողովրդի

զանգվածային տեղահանության ու կոտորածների ականատեսն է դառնում: Թափված արյան վրեժը հանելու համար նա անդամագրվում է Հայ հեղափոխական դաշնակցության ընդհանուր ժողովում ստեղծված հատուկ կառույցին՝ «Նեմեսիսին»:

1919 թ. Թիֆլիսի Երևանյան հրապարակում Արամ Երկանյանը գնդակահարում է Ադրբեջանի ռազմական նախարար Ղազիմբեկովին, ապա Ադրբեջանի խորհրդի նախագահ Աղաևին, 1920 թվականին սպանում Բաքվի և Շուշիի կոտորածների կազմակերպիչ Ֆաթալի Խան Խոյսկուն:

Նոր առաջադրանք ստանալուց հետո Արամը մեկնում է Իտալիա: Այս անգամ նրա թիրախում Բեհաեդդին Շաքիրն էր: Մի քանի օր անց Արամը հասնում է Հռոմ, այնտեղից՝ Վիեննա՝ միանալով «Նեմեսիս» գործողության կազմակերպիչ Շահան Նաթալին:

1922 թ. 6 հոգուց բաղկացած վրիժառուների խումբը Նաթալիի գլխավորությամբ մեկնում է Բեռլին: Սկսվում են Շաքիրին հետապնդելու աշխատանքները: Արամը լավ էր տիրապետում գործողության պլանին: Հետապնդումների արդյունքները պարզում են, որ Շաքիրը վտանգ էր զգում, այդ պատճառով էլ տնից դուրս էր գալիս թիկնապահի ուղեկցությամբ միայն:

Հենց փողոցում Արամն ու Շաքիրը հանդիպում են, հանդիպում են նրանց հայացքները: Ասում են՝ թուրք դահիճն այլալվում է, զգում է, որ նրան հայի աչքեր են նայում՝

Արամ Երկանյանի աչքերը:

Երկանյան այս գերդաստանից է սերում հայտնի երաժիշտներ կոմպոզիտոր Երվանդ և դաշնակահար, դիրիժոր Սեդրակ Երկանյանների պապը՝ Երվանդը: Մի շատ հետաքրքիր և խելացի մարդ: Նա կարողացել էր եղեռնի օրերին առանց զոհ տալու անցնելով թուրքական գյուղերի միջով՝ թաքնվել Ձոնգուրդակ գյուղում, որտեղ շատ կարճ ժամանակ մնալուց հետո գնացել է Պոլիս՝ այնտեղից էլ Ֆրանսիա:

Դիրիժոր, Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, Անդրկովկասյան համամիութենական փառատոնի դափնեկիր, «Տաղարան» հնագույն երաժշտության անսամբլի գեղարվեստական ղեկավար Սեդրակ Երկանյանը պատմում է, որ դեռ «Խորան» կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար եղած ժա-

մանակ քարտեզագրել է հայկական լեռնաշխարհի տարբեր շրջանների երգեր, պարեր, քոչարիների ու հորովելների մի շարք: Սեդրակ Երկանյանը հանդես է եկել աշխարհի շատ երկրներում:

Իսկ ովքե՞ր են այս գերդաստանների երիտասարդները: Ճարտարապետ Տիրան Երկանյանը հայտնի լրագրող Ար-



Արտյոմ
Երկանյան



Երվանդ Երկանյանը կնոջ
Աննա Արևշատյանի հետ



Սեդրակ
Երկանյան

տյոմ Երկանյանի պապն է: Տիրան Երկանյանի հայտնի գործերից է «Մոսկվա» կինոթատրոնի շենքը: Արտյոմ Երկանյանը պատմում է, թե պապն ինչպես էր աշխատում կինոթատրոնի նախագծի վրա: Երաժիշտներ Երվանդ ու Սեդրակ Երկանյանների հայրը՝ Վահանը, հայտնի դերձակ է եղել և այնքան մեծ ճանաչում է ունեցել, որ պատերազմի տարիներին հենց նրան են գերմանացիները պատվիրել իրենց համազգեստները:

Երվանդ և Սեդրակ Երկանյանները ծնվել են Գյումրիում, այնուհետև ավարտել Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան և դասավանդել այստեղ: Կոմպոզիտոր Երվանդ Երկանյանը 1987-1994 թվականներին եղել է «Տաղարան» անսամբլի ղեկավարը, մշակել է մոտ 150 հայկական շարականներ, իսկ 1995 թվականին գլխավորել է Բեյրութի «Գուսան» երգչախումբը և «Բեյրութի Բարսեղ Կանաչյան» քոլեջը:

Գերդաստանի շառավիղները անսպասելիորեն 1990-ականներին ճանաչում են Գամիդիքի Անդրանիկ Երկանյանին: Երկանյանների գերդաստանը հերոսական անցյալ ունի, նրանց ստեղծած երգչախմբերի կատարումները հոգիներ են գրավում»: <https://hy.armradio.am/2021/11/25/%...>

Իր ողջույնը հղել է Գեղունի Չքյանը միջոցառմանը և ներկայներից, - ինչպես նշեց կազմա-

Դասախոսություն-համերգ – շնորհանդես-բայ դասին ի հիշատակ Նեմեսիսի հեռուների


Կերպիչ երաժշտագետ Գոհար Շագոյանը, - այն կոմպոզիտորի և Դոկիանեն Շիրազի բանաստեղծությունների հիման վրա գրված վոկալ շարքից «Արարատ» ռոմանսն է, որը Գեղունի Չքյանն ասաց շատ տեղին կլինի այդտեղ կարողալու համար: Եվ հարգարժան կոմպոզիտորի պատգամը կատարում ենք».

Արարատ

Ինչ գեղեցիկ ես մայր իմ Արարատ,
Իմ երազի պես բարձր ու անարատ,
Ինչ գեղեցիկ ես սար իմ հայրենի
Երկրիս պես անբծ հավերժ կենդանի:
Հայացքս է սառել, ծյուն դառել վրադ
Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու:
Միթե շատ պիտի մնաս Արարատ
Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու: Եվ լրացրել է կոմպոզիտորը կողայում. - Արարատ... Արարատ...
Համերգային ծրագիրը մեջընդմեջվում էր խոսքով:



Լիլի Մարկոսյան



Գոհար Շագոյան

Լիլի Մարկոսյանի հրատարակված «Վոկալիզները ուսուցման գործընթացում» ուսումնամեթոդական նոտային ժողովածուի շնորհանդեսը կատարվաց և նրա կատարումը. Կոմիտասի «Լե լե յաման», «Կռունկ»
Բարսեղ Կանաչյանի՝ «Օրոր»-ն առանձնահատուկ հնչեցին այդ մթնոլորտում:
Քուն Բաբջանյանի անվան երաժշտամակավարժական ընդհանուր կրթության երգեցողության բաժնի վարիչ Աննա Մուսաեյան ներկայացավ սաների՝ դասախոս Ռուզան Այվազյանի դասարանի ուսանողներ հետ՝ Կարեն Վարդանյանը 4-րդ կուրս Վահրամ Խաչատրյան 3-րդ կուրս Գևորգ Ավագյան 2-րդ կուրս
Վարդգես Դուրգարյանը 4-րդ կուրսում է սովորում ԵՊԿ պրոֆեսոր Մարգարիտ Շահինյանի դասարանից է:
Կատարեց՝ «Չայն մը հնչեց» ժողովրդահայրենասիրական երգը:

Ներկաներին կազմակերպիչը ներկայացրեց Սողոմոն Թեհլիրյանի կյանքի անցած ուղին: <http://ergir.am/gini-lic/>
Նա (ապրիլի 2, 1897 – մայիսի 23, 1960) Հայոց Ցեղասպանության վերապրող և ազգային հերոս է, որ գնդակահարել է երիտթուրքերի ներքին գործերի նախարար և Հայոց Ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ, Թալեաթ փաշային:

Սողոմոն Թեհլիրյանը ծնվել է 1896 թվականին Բագառիում՝ Արևմտյան Հայաստանում, ուր ստացել է իր նախնական կրթությունը: Ապա ուսումը շարունակել է Երզնկայի Կենտրոնական ուսումնարանում, որն ավարտել է 1912 թ. և 1913-ին փոխադրվել է Սերբիա: Առաջին Համաշխարհային Պատերազմը սկսվելու պես նա մեկնել է Հայաստան, ուր մասնակցել է կամավորական շարժմանը՝ Անդրանիկի գնդում: 1915 թ. Թեհլիրյանը վերապրել է ցեղասպանությունը, ինչը շատ մեծ ազդեցություն է ունեցել նրա կյանքում:

1921 թ. Թեհլիրյանը մասնակցել է Դաշնակցության Նեմեսիս գործողությանը՝ առաջադրանք ստանալով սպանել Եղեռնի գլխավոր կազմակերպիչին՝ Թալեաթ փաշային: Նույն տարվա մարտի 15-ին Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասի Հարդենբերգ փողոցում Սողոմոն Թեհլիրյանը գնդակահարում է Թալեաթին և ձերբակալվում: Սակայն 1921թ. հունիսի 2-ին գերմանական դատարանը անպարտ է ճանաչում Սողոմոն Թեհլիրյանին: Վերջինս պաշտպանվում էր երեք դատախազների կողմից, որոնցից մեկը բժիշկ Թեոդոր Նիմայերն էր՝ օրենսդրության պրոֆեսոր Քիլի համալսարանից:

Արդարացված Թեհլիրյանը երկար տարիներ ապրել է Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադի Դալմատինսկա փողոցի թիվ 78 տանը: 1945-ից հետո բնակություն է հաստատել ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում, որտեղ էլ մահացել է 1960 թ. մայիսի 23-ին: Ի հիշատակ Թեհլիրյանի՝ հուշարժան է կանգնեցվել Ֆրեզնոյում, Թալիմի շրջանի Մաստարա գյուղում և Երևանում:

10 անհայտ փաստ վրիժառուի մասին

Համացանցի հայկական հատվածում ոչինչ չեք գտնի ամենահայտնի հայերից մեկի մասին, եթե փնտրեք նրա իսկական անուն-ազգանունով, քանի որ Թեհլիրյան

Սողոմոնի ազգանունը ժամանակի ընթացքում աղավաղվել է ու դարձել Թեհլիրյան: Թեհլիրյաններն իրենք էլ դժվարանում են պատասխանել հարցին՝ որտեղից է եկել սխալը և երբ է այն դարձել հիմնական ու գործածական: Արա Օսկանյանը՝ Սողոմոն Թեհլիրյանի հորեղբոր ծոռը, բացատրել է, թե ինչու Թեհլիրյան, և ոչ Թեհլիրյան: Ներկայացնում ենք 10 անհայտ փաստ Սողոմոն Թեհլիրյանի մասին:

1. Թեհլիրյանների նախապապը 16-17 տարեկանում վիճեց տան անդամների հետ և հեռացավ տնից: Տարիներ անց նա վերադարձավ և գյուղում մականուն ստացավ: Թուրքերեն «կռիվ» բառը «թեհն» էր ու գյուղացիներն ասում էին, որ նա «թեհ է ըրել», որտեղից էլ ծնվում է նրա մականունը՝ Թեհլիր, նրա զավակներին էլ ասում են Թեհլիրի տղաներ, որտեղից էլ սկիզբ է առնում Թեհլիրյան ազգանունը: Սողոմոն ինքը ստորագրում էր որպես Թեհլիրյան: Թալեաթի սպանությունից հետո Թեհլիրյանները փոխում են իրենց ազգանունը, և Սողոմոնը դառնում է Մելիքյան:

2. Թեհլիրյանները երկար տարիներ զբաղվել են սրճագործությամբ: Սուրճի բիզնեսը հիմնադրել էր Թեհլիրը, որը տան անդամների հետ վեճից հետո մեկնել էր Կոնիա, որտեղ էլ սկիզբ էր դրել ընտանեկան բիզնեսին: Հետագայում այդ բիզնեսը շարունակել են նրա զավակները և սերնդեսերնդ փոխանցել Սողոմոն Թեհլիրյանի հորը և նրա եղբայրներին, ովքեր Սերբիայում սուրճի խանութ են ունեցել:

3. Կրակել Սողոմոն Թեհլիրյանը սովորել է Արմենականների կամավորական ջոկատում: Նրա հորեղբոր որդին՝ Սամվելը, այդ ջոկատի ղեկավարն էր: Արմենականները երիտասարդ կամավորականների էին հավաքագրում և նրանց պաշտպանվել սովորեցնում: Սամվելի նախաձեռնությամբ Սողոմոնը ընդգրկվեց այդ ջոկատում և Եփրատի մացառուտներում մնացած կամավորականների հետ սովորեց կրակել:

4. Ցեղասպանության տարիներին Թեհլիրյանների տոհմը 85 անդամ կորցրեց: Սողոմոն Թեհլիրյանի 17 անդամից բաղկացած ընտանիքից գյուղում մնացածներից փրկվեց միայն նրա եղբոր՝ Միսակի դուստրը, Արմենուհին, ում հետագայում փրկագնով քրդերի մոտից վերադարձրին հարազատներին: Բացի Արմենուհուց փրկվեցին նրանք, ովքեր Սերբիայում էին:

Սողոմոն Թեհլիրյանը Ցեղասպանության տարիներին հայրենիքում չէր: Նա Երզնկայից նոր էր հասել Սերբիայի գավառական քաղաք Վալեո, երբ սպանվեց ավստրիական զահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդն ու սկսվեց Առաջին համաշխարհայինը: Պատերազմի մեկնարկից մի քանի ամիս անց Սողոմոնի հայրը Սոֆիայից նամակ ստացավ, որտեղ նրա բարեկամներից մեկը տեղեկացնում էր Հայաստանից, որ Բուլղարիայում հայերը կամավորական ջոկատներ են կազմում:

5. Իմանալով, որ Բուլղարիայում կամավորական ջոկատներ են կազմավորվում, Սողոմոնը առանց հոր համաձայնությունն ստանալու որոշեց մեկնել այնտեղ: Նույնմեքին սերբ-բուլղարական սահմանին նրան ձերբակալեցին և մեղադրեցին լրեստության համար: Կարճ ժամանակ անց թյուրիմացությունը պարզվեց և Սողոմոնին ազատ արձակեցին: Բուլղարիայից նա մեկնեց Ռումինիա, ու մինչ հայրը կհեռագրեր, որ նրան հետ ուղարկեն, հասցրեց ընկերների հետ մեկնել Ռոստով, այնուհետև՝ Թիֆլիս: Հենց այստեղ էլ ծանոթացավ ապագա՝ կնոջ Անահիտի հետ:

6. Թալեաթը միակը չէ, ում Սողոմոն Թեհլիրյանը սպանել է: Պոլսում գտնվելու ժամանակ նա տեղեկացավ, որ կոտորված հայ մտավորականների ցուցակը կազմել է Հարություն անունով մի հայ: Այս մասին նրան ասաց օրիորդ Երանուհին, ով էլ հետագայում Թեհլիրյանին ծանոթացրեց դաշնակների հետ: Երանուհին նրան ցույց տվեց Հարությունի տան տեղը: Թեհլիրյանը ծանոթների միջոցով տեղեկացավ, որ Հարություն Սկրտչյանի կազմած և ոստիկանապետ Պետրի միջոցով Թալեաթին հանձնված սև ցուցակը բաղկացած է եղել 250 մտավորականի անունից, որոնցից հազիվ 10 մարդ է փրկվել: Թեհլիրյանն այս ամենն իմանալուց հետո մոտ երկու շաբաթ հետևում էր նրան, բայց նրա տան մուտքի դուռը միշտ փակ էր, մատնիչն էլ ներսուղուրս գրեթե չէր անում: Մի երեկ Թեհլիրյանը փողոցից հետևեց Սկրտչյանի տան անցուղարձին, տեսավ, որ տանն ինչ-որ հավաքույթ է ու Սկրտչյանը բաժակը ձեռքին ճառ է ասում: Թեհլիրյանը հանեց ատրճառակը և որոշեց կրակել ապակու հետևից: Նա կրակեց ուղիղ դավաճանի սրտին ու տեսավ, թե ինչպես գետնին տապալեց նրան, ապա արագ հեռացավ:

Հաջորդ առավոտ Թեհլիրյանն իմացավ, որ Սկրտչյանը չի մահացել և հիվանդանոցում է: Նա որոշեց հիվանդանոց գնալ և նրան այնտեղ սպանել: Այս քայլից նրան հետ պահեց օրիորդ Երանուհին, ով պատմեց, որ բժիշկները հույս չեն տվել: Մի քանի ժամ անց Հարություն Սկրտչյանը



Միջոցառման մասնակիցները և հյուրերը

մահացավ: Հետագայում մի գրույցի ժամանակ, երբ Սամվել Օսկանյանը Սողոմոնին ասաց, որ նա իր վրեժը լուծել է, իսկ ինքը դեռ ոչինչ չի արել, Թեհլիրյանը նրան կոչ արեց անհոգ լինել, քանի, որ ինքը «Բագառիճի բուր ջրհորները թուրքերով է լցրել»:

Այս մասին որևէ տեղ չի հիշատակվել և գիտեին միայն նրա ընտանիքի անդամները:

7. Այն ժամանակ, երբ Սողոմոնը Պոլսում իր վրեժն իրագործելու համար աջակիցներ էր փնտրում, տեղեկացավ, որ Ջավեն պատրիարքն ազատվել է քստրից և գտնվում է Փարիզում: Թալեաթին հետապնդելու համար միջոցներ գտնելու համար նա որոշեց դիմել պատրարքին:

«Ես այդ կարգի գործերում մեջ չեմ կարող մաս ունենալ, զավակս», - Սողոմոնին լսելուց հետո պատասխանեց Պատրիարքը և ասաց, որ կարող է նրան օգնել Փարիզում գործ գտնել, տեղավորվել: Իր հուշերում Սողոմոն Թեհլիրյանը պատմում էր՝ այնքան վատախ էր, որ պատրիարքը կօգնի, որ մերժումից հետո երկար մնաց փողոցում կանգնած, չիմառնալով ուր գնալ և ինչ անել: Այդ ծախողումից հետո Սողոմոնը մնաց Փարիզում, աշակերտում էր կոշկակարի մոտ, մինչև ստացավ Երանուհու նամակը, որտեղ վերջինս իրեն հորդորում էր Ամերիկա գնալ՝ «իրենց հայտնի գործով»:

8. 1921 թվականին դաշնակցականներն իմացան, որ Հռոմում թուրքերի մասնակցությամբ ժողով է լինելու և Թալեաթին գտնելու բոլոր ջանքերը կենտրոնացրին այնտեղ: Քանի որ Թեհլիրյանը Բեռլինում էր, նրան հանձնարարվեց լինել կառավարապետ և ստուգել Հռոմ մեկնող գնացքները: Մի անգամ Թեհլիրյանը նկատեց, որ թուրքերի մի խումբ ճանապարհում է մեկ այլ խմբի և վերադառնում: Վերադարձողներից մեկին նրանք առանձնահատուկ վերաբերմունք էին ցուցաբերում և դիմում «փաշայով»: Թեհլիրյանն սկսեց կասկածել, որ այդ մարդն էլ կարող է Թալեաթը լինել և գնաց նրանց հետևից: Թեհլիրյանը հետագայում պատմում էր, որ մինչև վերջին պահը կասկածում էր՝ արդյոք նրա դիմացից գնացող թուրքը Թալեաթն է, թե՛ ոչ: Կրակելուց առաջ Սողոմոնը գոռաց «Թալեաթ» և նա շրջվեց: Դա էլ ցրեց Թեհլիրյանի վերջին կասկածներն ու նա կրակեց: Թեհլիրյանը երգում ասվում էր, որ Թեհլիրյանը կրակել է Թալեաթի ճակատին, իրականում Սողոմոնը կրակեց նրան կողքից՝ քունքին:

Կրակելուց հետո հասցրեց փախչել, բայց...

Ճանապարհին սկսեց կասկածել՝ արդյոք սպանե՞լ է նրան: Կասկածներն ավելի ահագնացան, երբ նա մտաբերեց, որ Հարություն Սկրտչյանին միանգամից սպանել չէր ստացվել: Հենց դա պատճառ դարձավ, որ վերադառնա սպանության վայր: Երբ փորձում էր ճեղքել ամբիխը՝ համոզվելու, մահացե՞լ է արդյոք Թալեաթը, թե՛ ոչ, նրա ուղեկիցները ճանաչեցին Թեհլիրյանին ու բռնեցին նրան: Ու քանի որ այն ժամանակ ընդունված էր ձեռնափայտ կրելը, հավաքվածները, որոնց մեծ մասը ձեռնափայտերով էր, սկսեցին ծեծել նրան: Մինչև օրս պահպանվել է շապիկը, որն այդ օրը կրում էր Սողոմոնը, ամբողջովին արյունոտված:

9. Դատավարությունից հետո գերմանական դատարանը Թեհլիրյանին վերադարձրեց այն ատրճառակը, որով սպանվել էր Թալեաթը: Սողոմոնն իր ձեռքով այն երկրորդ համաշխարհային տարիներին մետեց Դանուբ գետը, քանի որ այդ ժամանակ Սերբիայում տներ էին խուզարկում: Նա ստիպված էր ազատվել գեղքից:

10. 1930-ականներին հայտնի դարձավ, որ պաշտոնական այցով Սերբիա պիտի ժամանի Թուրքիայի նախագահը: Այցի օրակարգը մշակելիս թուրքերը սերբերի առաջ պայման դրեցին՝ ձերբակալել Թեհլիրյաններին: Պաշտոնական Սերբիան մերժեց, ասելով, որ չի կարող ձերբակալել իր երկրի քաղաքացիներին, բայց խոստանում է տան հսկողություն սահմանել: 3 օր շարունակ Թեհլիրյաններին պատկանող տների դիմաց սերբ ոստիկաններ էին հերթապահում և խնդրում նրանց չլքել այն: Այդ ժամանակ Սողոմոն Թեհլիրյանը հորվաթիայում էր, Թուրքիայի նախագահի այցի օրը վերադարձավ Բելգրադ: Հորեղբոր որդին Սամվելը, պատահաբար պատուհանից տեսավ, որ նա մոտենում է տանը և նրան ցույց տվեց ոստիկաններին, հաս-

Դասախոսություն-համերգ – շնորհանդես-բայ դասին ի հիշատակ Նեմեսիսի հեռուների



Միջոցառման մասնակիցները և հյուրերը



Վահրամ Խաչատրյան
Պետրոս Ավագյան
Կարեն Վարդանյան

կացնելով, որ հեռանա: Թուրքիայի նախագահն այդպես էլ չիմացավ, որ մարդը, ումից նա սարսափում էր, իր այցի ժամանակ ազատ շրջում էր Բելգրադի փողոցներում:

Պետք է հնչեր Բարսեղ Կանաչյան երգը Սողոմոն Թեհլիրյանին նվիրված ուստի ներկայացնում են անվանի կոմպոզիտորի անցած ուղին:

Բարսեղ Կանաչյան (1885, ապրիլի 17, Ռոդոսթո - մայիսի 21, 1967, Բեյրութ), հայ կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական-հասարակական գործիչ: «Գուսան» երգչախմբի վերահիմնադիրն է Կոմիտասի հիվանդությունից հետո (1933 - 1961 թթ.):

Բարսեղ Կանաչյանը ծնվել է Ռոդոսթոյում (այժմ Թեքիրդաղ՝ Թուրքիա) 1885 թվականին: 1888 թվականին ընտանիքը տեղափոխվում է Կոստանդնուպոլիս, որտեղ Կանաչյանն ստանում է նախնական կրթությունը: 1896 թվականին ընտանիքը գաղթում է Վառնա: Նաթան-Բեկ Ամիրխանյանից երաժշտության դասեր է վերցնում (ջութակ, երաժշտության տեսություն, խմբավարություն): 1903 թվականից սովորում է Բուխարեստում (դաշնամուր և հարմոնիա): 1908 թվականի օսմանյան սահմանադրության ընդունումից հետո Կանաչյանների ընտանիքն ապագայի ակնկալիքներով վերադառնում է Թուրքիա՝ Կոստանդնուպոլիս: Կանաչյանն այստեղ կազմում է «Քմար» փողային նվագախումբը, զբաղվում դասավանդմամբ, կատարում ստեղծագործական առաջին փորձերը: Նրա համար որոշիչ է լինում Կոմիտասի հետ հանդիպումը 1910 թվականի դեկտեմբերին: Կանաչյանը հանդես է գալիս «Գուսան» երգչախմբում, Կոմիտասի «հինգ սաներ»-ի թվում է նա հարմոնիայի դասեր է առնում, հետևում խմբավարական արվեստին: 1919 թվականին Կոմիտասին նվիրված համերգին հանդես է եկել որպես խմբավար 400 հոգանոց միացյալ երգչախմբով: «Հինգ սաներ»-ով ներդաշնակում և մշակում են հայրենասիրական երգեր: 1920 թվականից շարունակել է երաժշտական կրթությունը Փարիզում: 1922 թվականից հայկական գաղթօջախներում զբաղվել է խմբավարական գործով: 1928 թվականից դասավանդել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում, 1933 թվականից Նշան Փալանջյան ճեմարանում: 1936 թվականին Բեյրութում հիմնում է «Գուսան» երգչախումբը, այդ խմբի համար մշակում հայկական և մի քանի արաբական ժողովրդական երգեր: 1946 թվականին նշվում է Բարսեղ Կանաչյանի երաժշտական գործունեության 40-ամյակը:

Բ. Կանաչյանը գրել է շուրջ 30 խմբերգ («Հոյնար», «Դալիլ», «Վարդերի հետ» և այլն) և հայ բանաստեղծների խոսքերով 10 մեներգ՝ դաշնամուրի նվագակցությամբ («Օրոր», «Ասում են ուռին», «Ավարդի երազը» և այլն), որոնք առանձնանում են մեղեդայնությամբ և վոկալի մուր և զգացողությամբ: Հեղինակ է նաև 20 մանկական երգերի և «Աբեղա» (ըստ Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի) երգային օպերայի: Կանաչյանի ստեղծագործության մեջ առավել ուշագրավ է «Նանոր» վիպական-դրամատիկական խմբերգային ծավալուն պատկերը, որը հայ դասական խմբերգային արվեստի նշանավոր երկերից է: Հայտնի է «Բան, փորոտան» հայրենասիրական երգի նրա մշակումը: Կանաչյանի խմբերգերն ու մեներգերը մասամբ հրատարակվել են Բեյրութում (1946–1948) և Երևանում (1969):

Արաբական մշակույթի զարգացմանը նպաստելու համար Կանաչյանը պարգևատրվել է արաբական և ֆրանսիա-

դաշնակցություն ժողով արեց,
Շուն թալեթին մահ որոշեց,
Թեհլերյանն էլ իրագործեց:
(Թեհլերյանի բախտը բացվեց)
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ,
խմողաց անուշ:

Հայոց կուսանց մատներ փափուկ,
Մարտից առաջ՝ խրախուսն ամուր,
Նրանց կամոք՝ զենքս դիպուկ:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Հայոց մայրեր կաղոթեին,
Հայ մարտիկներին կորհնեին,
Սուրբ Կարապետ կկանչեին:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Հայրս-մայրս գիս ծնեցին,
Եռագույնով փաթաթեցին,
Հայրենիքին նվիրեցին:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Երկրագունդը շատ կանաչ է,
Մեջը լիքը հայու մանչ է,
Հայրենիքը գիս կը կանչե:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Շուն թալեթը փախավ Բեռլին,
Թեհլերյանը հասավ հետքին,
(Թեհլերյանը հասավ ետին)
Ձարկեց ճակտին, փռեց գետին(գետնին):
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Շուն թալեթի տունը ցած է,
Ներս մտնողը անիծված է,
թալեթս նստած հավկիթ կածե:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Շուն թալեթին կազնեցուցին,
Ջերը լեբլեբի լեցուցին,
Հըբը-հըբը կլլեցուցին,
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Սև սուգ կապեց Իսրայելը,
Լացեց ասորի հայրիկը,
ճաքեց ջիուղ կնկա սիրտը:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Արև ծագեց արևելքում,
Եկավ սպառված ազատություն,
Կեցցե՛ հայոց ֆիդայություն:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Շուն թալեթին դրին գյոռը,(հորը)
Լուրը հասավ պոռնիկ մորը,
Կեցցե՛ հայոց կամավորը:
(Կեցցե՛ գերման դատավորը)
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Հիշատակդ միշտ փառավոր,
Շիրիմիդ լույս Քրիստափոր,
Մայիս քսանութ շնորհավոր:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Հիշատակդ հուր-հավիտյան,
Շիրիմիդ լույս Թեհլերյան,
Մարտ տասնհինգդ միշտ հիշարժան:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Մեր տան դռներ միշտ էլ բաց են,
Մեզ մոտ եկողը պատվված են,
Մեր տան անդամք զենք կը պաշտեն,
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Իմ բալկոնը քոնի դիմաց,
Քեզի տեսա խելքս գնաց,
Տասնոցիս մեջ բան չմնաց,
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Մենք Արցախի զավակներն ենք,
Մեր պապերի հետնորդներն ենք,
թուրք-ազերուն մենք կ....ենք, (կմորթենք :))
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Կողջունեն ձեզ, հայ՝ զինվորներ
Գնդակի լեզուով խոսողներ,
Հայ բանակի քաջ մարտիկներ:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Խմենք հայ ազգի կենացը,
Սուրբ Հայաստանի կենացը,
Խմենք Թեհլերյանի կենացը,
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Ես կը խմեմ քո կենացը,
Դու կը խմես իմ կենացը,
Խմենք Թեհլերյանի կենացը:
Գինի՛ լից, ընկե՛ր ջան, գինի՛ լից,
խմողաց անուշ-անուշ, խմողաց անուշ:

Հանդիպումը եզրափակեցին Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի սաները կատարելով Գուսան Պետիկի «Ախպես ու ես» և կատարումը նվիրվեց 44 օրյա պատերազմում մասնակիցներին և զոհված թողանքների՝ Ջրականում զոհվածներ 19-ամյա Վրեժ Մարտիրոսյանին և մանրամարդիկ-բակետբոլիստ ընդամենը մեկ ամսայա զինծառայող՝ Սամվել Խաչատրյանին, ճանաչում ունեցող թե՛ արտերկրներում և թե՛ հայրենիքում երգիչ, խմբավար կամավորական 49-ամյա՝ Գևորգ Հաճեանին, Մարտունի 2-ում զոհված՝ Ռուբեն Համբարձումյանին, ինչպես նաև կոմսերվատորիականներին յոթ հոգի՝ զոհված, որոնց թվում ուսխորհրդի նախագահ՝ ակադեմիական երգեցողության բաժնում սովորող Գագիկ Խաչատրյանին և տաղանդավոր երգիչ 2-րդ կուրսի ուսանող Գոռ Թումանյանին, և զոհված կոմիտասականներին և բաբաջանյանականներին:

ԼԱՐՈՒՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՖԵԼԵՏՈՆ

«Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» հոբեյանական տարեգիրք-ալբոմում թույլ տված որոշ անաչությունների մասին

Կոմիտասի անվան կոնսերվատորիայի 85-ամյակի տարեգրքային նվիրված նկարագրող գրքում, օպերային ստուդիայի և դիրիժորական դասարանի պատմության վերաբերող բաժիններն ինձ հիշեցնում են անգլիացի գրող Ջեյմս Մորիերի վեպի մի դրվագ: Վեպի հերոսը՝ պարսիկ Յաջի Բաբան Պոլսի սրճարաններն ու չայ-խանաներն այցելող հաճախորդների տեղեկությունների հիման վրա գրում է ... «Եվրոպայի պատմությունը»:

Նմանատիպ մի նմուշ է օպերային ստուդիայի բեմադրությունների աղյուսակը, որ ստեղծված է ըստ երևույթին, մի կողմնակի «հաճախորդի» հիշողության հիման վրա, այլ ոչ փաստերի: Նշված աղյուսակում բացակայում են հետևյալ ներկայացումները, թվականներն ու բեմադրողները.

1. Ռ. Լեոնկավալո - «Պայացներ» (1990թ. դիր. Վ. Բաբայան, ռեժ. Վ. Բագրատունի),
2. Ֆ. Լոու «Իմ չքնաղ լեդի» (1991թ., դիր. Ա. Մարկոսյան, ռեժ. Դ. Բարխուդարյան, պարուսույց Ն. Սարգսյան),
3. Ջ. Պուչչինի - «Ջաննի Սկիկի» (1991թ., դիր. Լ. Շաբանով, ռեժ. Վ. Բագրատունի),
4. Գ. Դոնիժետտի - «Սիրո ըմպելիք» (1991թ., դիր. Ա. Մարկոսյան, ռեժ. Դ. Բարխուդարյան),

Սխալների մի շարք է պարունակում նաև բեմադրողներին և բեմադրություններին թվականներին վերաբերող տեղեկատվությունը:

Ջ. Գերշվինի «Պորգի և Բես»-ի բեմադրությունը նշված է 1992թ., որը սխալ է, քանի, որ ռեժիսոր Բագրատունին վախճանվել է 1991-ի հուլիսի 1-ին:

Պ. Չայկովսկու «Իոլանտա» և Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերաների բեմադրող դիրիժոր Ա. Մարկոսյանի փոխարեն սխալ նշված է Յու. Դավթյան, իսկ «Իոլանտա»-ի բեմականցման թվականը 1989-ի փոխարեն՝ 1990-ին:

«Սպասուհին-տիրուհի» օպերայի բեմելը 1985-ի (հոկտեմբերի 29) փոխարեն նշված է երկու տարի ուշ՝ 1987-ին: Այսքան առաջին ստուդիայի բեմադրությունների աղյուսակում:

Այնուհետև.

Օպերային-սիմֆոնիկ դիրիժորության բաժնում Մ. Մալունցյանի դիրիժորական դասարանն ավարտածների շարքում նշված է Դ. Մեսյան, որը չի եղել և չի ավարտել հիշյալ դասարանը:

Դրան հակառակ՝ այստեղից բացակայում են Աշոտ Ղափանցյանի ու Պողոս Գասպարյանի անունները, որոնք Մա-

լունցյան-ուսուցչի հպարտությունն էին շրջանավարտների թվում:

Բացակայում են նաև Գրիգոր Դանիելյանի (հետագայում Դանիել-երաժիշտ) և Վալտեր Դովիանիսյանի անունները:

Սխալների շարքը նույնիսկ նշված սահմաններում կարելի է շարունակել, էլ չենք ասում մյուս բաժիններում տեղ գտած թյուրիմացություններն ու բացթողումները, որոնց ճշգրտումները մեր խնդիրը չէ:

Դարկ է գիտակցել, որ պատմական գրականության հեղինակների ու մանավանդ տարեգրքային կազմողների պարտականությունն է ստույգ և սպառնիչ տեղեկություններ գետեղել հրապարակումներում, և անթույլատրելի են այսօրինակ խեղաթյուրումները պատմություն կազմող էջերում: Առավել ևս անթույլատրելի, նույնիսկ դատապարտելի է երախտավորների վաստակն անվաստակներին վերագրելը, որ իսպառ խեղաթյուրում, տակնուվրա է անում յուրաքանչյուր գործչի ներդրումը պատմության մեջ:

ԱՐԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Դիրիժոր, ԵՊԿ ղոցենտ
(աշխատել է ԵՊԿ-ում 1985-1991 թթ.)

Խմբագրական

Կոմիտասի անվան կոնսերվատորիայի 85-ամյակի տարեգրքային նվիրված պատկերազարդ ալբոմը լույս է տեսել 2008-ին: 15 տարի անց խմբագրքային ներկայացվել են ուղղումներ, որոնք պատշաճ ձևով ձևակերպված չեն համապատասխան հրատարակչական վրիպակների և սխալների ուղղումների՝ պահանջների և նորմերի: Բերում ենք այդ ուղղումների ձևակերպման ձևը, վրիպումները, որոնք կատարված են հեղինակի կողմից, չնշելով հատկապես էջերը համապատասխան բնագրի:

Աշխատությունը հրատարակվել է ժամանակին 8 հոգանոց խմբագրական խմբի կողմից, ովքեր մանրամասնորեն համապատասխան արխիվային նյութերի կազմել են սույն ժողովածուն: Անկեղծում ենք հեղինակից պատշաճ և հարգալից ձևակերպումով ներկայացված հոդված, ոչ ֆելետոնային չափերով ժանրի նման:

Սխալ է՝

էջերը նշված չեն

1. էջ... Ջ. Գերշվինի «Պորգի և Բես»-ի բեմադրությունը 1992թ.,
2. էջ... Պ. Չայկովսկու «Իոլանտա» և Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերաների բեմադրող դիրիժոր Յու. Դավթյան,
3. էջ... «Իոլանտա»-ի բեմականցման թվականը 1989-ին:
4. էջ... «Սպասուհին-տիրուհի» օպերայի բեմելը 1987-ին:
5. էջ... Դ. Մեսյան
6. էջ...

Պետք է լինի

1. էջ... Ջ. Գերշվինի «Պորգի և Բես»-ի բեմադրությունը 1991 թ.
2. էջ... Պ. Չայկովսկու «Իոլանտա» և Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերաների բեմադրող դիրիժոր Ա. Մարկոսյան
3. էջ... «Իոլանտա»-ի բեմականցման թվականը 1990-ին:
4. էջ... «Սպասուհին-տիրուհի» օպերայի բեմելը 1985-ի (հոկտեմբերի 29):
5. էջ... չպետք է լինի
6. էջ... Աշոտ Ղափանցյան, Պողոս Գասպարյան

Լրացումներ՝

1. էջ... Ռ. Լեոնկավալո - «Պայացներ» (1990թ. դիր. Վ. Բաբայան, ռեժ. Վ. Բագրատունի),
2. էջ... Ֆ. Լոու «Իմ չքնաղ լեդի» (1991թ., դիր. Ա. Մարկոսյան, ռեժ. Դ. Բարխուդարյան, պարուսույց Ն. Սարգսյան),
3. էջ... Ջ. Պուչչինի - «Ջաննի Սկիկի» (1991թ., դիր. Լ. Շաբանով, ռեժ. Վ. Բագրատունի),
4. էջ... Գ. Դոնիժետտի - «Սիրո ըմպելիք» (1991թ., դիր. Ա. Մարկոսյան, ռեժ. Դ. Բարխուդարյան)
5. էջ... Գրիգոր Դանիելյան (հետագայում Դանիել-երաժիշտ), Վալտեր Դովիանիսյան

ՆՈՐ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Никитина И.А. *Энигма. Беседы с героями современного музыкального мира.*



Для этой книги были отобраны самые яркие из бесед цикла “Энигма” телеканала “Культура”. Ирина Никитина проводит в книге уникальные интервью, которые помогут почувствовать музыку здесь и сейчас. Героями этой книги являются выдающиеся мировые деятели музыкального мира: Эвелин Гленни, Теодор Курентзис, Аида Гарифуллина, Хосе Кура и другие. Книга помогает познакомиться с

каждым героем лично, узнать, что такое современная музыка и как герои добились успеха, с какими трудностями героям приходится встречаться сегодня, и как они оценивают свое творчество и работу коллег.

Ирина Никитина окончила Ленинградскую консерваторию по классу фортепиано, в конце 1980-х стала лауреатом международных конкурсов в Женеве и Париже, выпустила две пластинки камерной музыки, но из-за травмы завершила исполнительскую карьеру.

С начала 1990-х Ирина Никитина — продюсер, инициатор и организатор музыкальных событий, самым масштабным из которых является фестиваль “Музыкальный

Олимп”. В 2020 исполнилось 25 лет одноименному фонду, который учредила и бессменно возглавляет Ирина Никитина. Фонд организовал российские концерты таких выдающихся музыкантов, как Роберто Аланья, Даниэль Баренбойм, Андраш Шифф, Анна-Софи Муттер, Чик Кория, Бобби Макферрин, Йо-Йо Ма, оркестр NHK под управлением Шарля Дютуа, Национальный оркестр Франции под управлением Курта Мазура и др.

В 2001 Ирина Никитина стала лауреатом Национальной премии общественного признания достижений женщин России “Олимпия” в номинации “За большие заслуги в популяризации музыкального искусства в России и поддержку молодых дарований”. Никитина — член Попечительского совета Международного фортепианного конкурса имени Гезы Анды (Швейцария), президент Нью-Йоркского фонда “Музыкальный Олимп” (США), вице-президент Ассоциации друзей фестиваля “Музыкальный Олимп” в Швейцарии (Цюрих), вице-президент швейцарского Фонда “Санкт-Петербург”, созданного для поддержки музыкальной школы-лицея при Санкт-Петербургской консерватории, член попечительских советов Международного общества по развитию межкультурного диалога *Civilizations Matter* и германо-российского форума молодых лидеров *Die Neue Generation*.

В 2015 Ирина Никитина возглавила вновь созданный Попечительский совет Международного телевизионного конкурса юных музыкантов “Щелкунчик” на телеканале “Культура”. Благодаря Попечительскому совету, в состав которого вошли, в частности, Владимир Спиваков, Денис Мацуев и Мартин Хинтерхойзер, после полутора десятилетий

существования конкурс “Щелкунчик” вышел на новый уровень.

С апреля 2016 Ирина Никитина ведет на телеканале “Культура” авторскую программу “Энигма”, которая выходит еженедельно по четвергам: беседы с выдающимися музыкантами России и мира. Благодаря редкостному профессионализму автора, ее безграничному знанию музыкального мира, потрясающему умению слушать и слышать собеседника передача “Энигма” стоит особняком в ряду схожих программ-интервью на российском телевидении и видеохостингах. В программе продумано абсолютно все для того, чтобы раскрыть и личность гостя, и его взгляды на важные, глобальные вопросы искусства, творчества, жизни.

Гостями “Энигмы” Ирины Никитиной (более 130 выпусков) были композиторы София Губайдулина, Гия Канчели и Тань Дунь, дирижеры Марис Янсонс, Даниэль Баренбойм, Риккардо Мути и Андريس Нельсонс, Андраш Шифф, Владимир Ашкенази, Даниил Трифонов и Люка Дебарг, скрипачка Патриция Копагинская, оперные певцы Элина Гаранча, Пласидо Доминго и Томас Хэмилсон, режиссеры Барри Коски и Дмитрий Черняков и другие звезды мировой музыки.

Книга — своего рода квинтэссенция телевизионной “Энигмы”. Отобрать 16 интервью из более 130 — задача непростая. И можно только довериться выбору автора и с удовольствием познакомиться с книжной версией лучшей музыкальной программы на современном российском телевидении.

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՍՏԵՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝

Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈՆԿ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՅԱՆ, ԳՈՐԴՐ ՇԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ՄԱՐԿՈՍՅԱՆ ԿՐԱՎՈՍՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝ ԳՈՐԴՐ ՇԱԳՈՅԱՆ

Խմբագիրներ՝ ԱՆՈՒՇ ԿՐԱՎՈՍՅԱՆ (հայ. լեզու),

ՍՈՒՅԱ ԱՆՍԱՌԻՅԱՆ (ռուս. լեզու)

Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՐԴՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 10 էջ: Ստորագրված է 25.05.2023: Գինը 200 դրամ: Տպագրանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է րացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունը նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com

https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/

